Ուսուցողական հեքիաթներ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)
Ու 805

Ուսուցողական հեքիաթներ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 88 էջ:
Ու 805

Այս պատկերազարդ ժողովածուի մեջ ներկայացված հեքիաթները կյանքի յուրօրինակ ուղեցույց են երեխաների համար: Դրանցում առկա ուսուցողական մտքերը հիմք են լավ մարդ դառնալու ճանապարհին: Հեքիաթներում կարևորվում են մարդկային այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են աշխատասիրությունը, հաստատակամությունը, ազնվությունը, հարգանքը մեծերի նկատմամբ և այլն:

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-9939-75-507-6
© Էդիթ Պրինտ, 2020

Թագավորի որդու առաջին դասերը

Թագավորը մի տղա է ունենում, որին աչքի լույսի պես սիրում է:

Երբ տղան մի քիչ մեծանում է, թագավորը կանչում է իր քաղաքի ամենաիմաստուն մարդուն և ասում.

– Վարպե՛տ, սա իմ միակ տղան է, ինձնից հետո նա է թագավորելու: Քեզ եմ հանձնում: Այնպիսի ուսում պետք է տաս, որ լավ մարդ դառնա, ողորմած ու արդար թագավոր լինի:

– Լա՛վ, ասում է իմաստունը:

– Մյուս օրը տղան գնում է վարպետ-ուսուցչի մոտ: Ուսուցիչը հացը վերցնում է նրա ձեռքից, ամբողջ օրը քաղցած պահում, իսկ երեկոյան ուղարկում է տուն:

– Տղան սովից թուլացած գալիս է տուն, հորը պատմում, թե՝ հացս առավ ձեռքիցս, ոչ մի բան էլ չսովորեցրեց:

– Թագավորն ինքն իրեն ասում է. «Տեսնես ի՞նչ է պատահել»:

– Հաջորդ օրը տղան գնում է ուսուցչի մոտ: Ուսուցիչը տղային գցում է մի մութ սենյակ, դուռը վրան փակում: Ամբողջ օրը տղա-

յին փակված է պահում, երեկոյան բացում է դուռը և տղային տուն ուղարկում:

– Տղան գալիս է տուն, թագավոր հորը պատմում, որ ամբողջ օրն ինքը մութ սենյակում փակված է եղել: Հայրն ասում է.

– Գուցե մի մե՞ղք ես գործել:

– Ոչինչ չեմ արել, հենց ներս մտա՝ բռնեց ծակը կոխեց, պատասխանում է տղան:

– Վնաս չունի, ես կկանչեմ, կզգուշացնեմ:

– Երրորդ օրը, երբ տղան մտնում է ուսուցչի տուն, սա բռնում է տղային ու մի լավ ծեծում: Տղան լաց լինելով վերադառնում է հոր մոտ:

– Այլևս նրա մոտ չեմ գնա, հայտարարում է նա:

– Թագավորը բարկանում է և հրամայում.

– Կանչեք էդ մարդուն:

– Վարպետ, առաջին օրը քաղցած թողեցիր, երկրորդ օրը բանտարկեցիր, երրորդ օրն էլ ծեծեցիր: Ասա տեսնեմ՝ նրա մեղքն ի՞նչ է:

– Թագավորն ապրած կենա, նա ոչ մի մեղք չունի, պատասխանում է վարպետ ուսուցիչը:

– Հապա ինչո՞ւ ես տղայիս չարչարում, հարցնում է թագավորը: Ես նրան քեզ հանձնեցի, որ կրթություն տաս:

– Թագավորն ապրած կենա, ասում է վարպետ ուսուցիչը, ես նրան սովորեցրի այն, ինչ իրեն ամենից առաջ հարկավոր է: Նա ինչպե՞ս կկարողանա ողորմած ու արդար լինել, եթե այդ ամենն իր վրա չզգա: Եթե մեկը գա, ասի՝ ես անոթի եմ, ողորմություն տուր, մյուսն ասի՝ ինձ անմեղ տեղը բանտարկել են, երրորդն ասի՝ ինձ իզուր տեղը ծեծել են, նա ինչպե՞ս պետք է հասկանա՝ անոթությունն ի՞նչ է, բանտն ի՞նչ է, ծեծն ի՞նչ է: Սա՛ է թագավորի տղայի առաջին դասը: Իսկ սրանից հետո թող ուսում ստանա:

Ինչն է ավելի կարևոր

Մի անգամ երկու ընկեր վիճեցին, թե մարդու կյանքում ինչն է ավելի կարևոր:

– Մտածելու բան չկա, բացականչեց նրանցից մեկը, փողն է երջանկություն բերում: Դու գիտես չէ՞, թե ես ինչպես բանաստեղծ դարձա: Ոչ ոք չէր ուզում իմ բանաստեղծությունները տպագրել: Բայց մահից առաջ հորաքույրս ինձ թողեց իր ունեցվածքը, և ես ինքս տպագրեցի իմ ոտանավորները: Այդ օրվանից հրատարակիչներից պրծում չունեմ: Հորաքրոջս փողերը եթե չլինեին, հիմա ոչ ոք չէր էլ իմանա, որ ես բանաստեղծ եմ:

– Հիմարությո՛ւն, ընդհատեց երկրորդ ընկերը: Ամեն ինչ ճակատագիրն է որոշում: Ես հիմա համարվում եմ Իտալիայի լավագույն երգիչը: Բայց շատ ժամանակ չի անցել այն օրերից, երբ ինձ ոչ ոք լսել չէր ուզում: Ես էլ երգում էի ծովի ափին՝ ձկների համար: Ճակատագրին հաճելի էր, որ հենց այն ժամանակ, երբ ես հերթական անգամ երգում էի ծովափին, անձամբ կոմս Լուիջին զբոսանքի դուրս գա: Կոմսը լսեց ինձ և հրավիրեց երգելու իր հարս-

նացուի պատվին կազմակերպված պարահանդեսին: Այդպես էլ ամեն ինչ սկսվեց: Ի՞նչ գործ ունի այստեղ փողը: Ճակատագի՛րն է կարևոր, ընկե՛րս, ճակատագի՛րը:

Երկար վիճեցին բանաստեղծն ու երգիչը, բայց չհամոզեցին իրար և գնացին զբոսնելու: Դուրս գալով տնից՝ քայլեցին ուր աչքները կկտրեր: Հասան մինչև քաղաքի սահմանը և այնտեղ տեսան մի կիսավեր խրճիթ: Ցնցոտիներով մի պատանի, խրճիթի շեմին նստած, կիթառ էր նվագում:

– Լսի՛ր, բարեկամ, դու, ինչպես տեսնում եմ, շատ ուրախ ես ապրում, ձայն տվեց նրան բանաստեղծը:

– Ի՞նչ ուրախություն, երբ մարդը երկրորդ օրն է՝ ոչինչ չի կերել, պատասխանեց պատանին:

– Այդ դեպքում ինչո՞ւ ես կիթառ նվագում, հարցրեց երգիչը:

– Ի՞նչ անեմ, կիթառը միակ բանն է, որ ինձ ժառանգություն է թողել հայրս, ասաց տղան:

Ընկերները նայեցին իրար. երկուսն էլ միաժամանակ նույն բանը մտածեցին.«Սա այն է, ինչ մեզ պետք է: Հիմա մենք կիմանանք, թե ինչն է ավելի կարևոր»: Նրանցից յուրաքանչյուրը գրպանից հիսուն սկուդո հանեց և տվեց կիթառահարին:

– Հարյուր սկուդո՞, բացականչեց պատանին: Շնորհակա՛լ եմ, բարի՛ պարոններ:

– Շնորհակալությունը քեզ պահիր, ուղիղ մեկ տարուց հետո մենք կգանք իմանալու՝ օգնեցի՞ն արդյոք քեզ այս փողերը, թե՞ ոչ, ասացին ընկերները և հետ դարձան:

Նրանք ճանապարհի շրջադարձն անցան թե չէ, տղան, որի անունն Ալչիդե էր, մտածեց.

– Ես, նախևառաջ, շա՛տ նրբերշիկ կգնեմ, իսկ հետո կմտածեմ, թե ինչ եմ անելու այս անսպասելի հարստությունը:

Տղան փողը դրեց գլխարկի աստառի տակ և ճանապարհ ընկավ դեպի կրպակ: Բայց... Ալչիդեն տասը քայլ էլ չէր հասցրել անել, երբ հանկարծ, չլսված բան. ձիթենու ծառից մի գզգզված

ագռավ թռավ եկավ, ճանկեց Ալչիդեի գլխարկն ու թռավ:

– Գո՛ղ, տո՛ւր փողերս, բղավեց խեղճ տղան: Բայց ագռավն ավելի արագ թափահարեց թևերն ու անհետացավ:

Անցավ մեկ տարի: Բանաստեղծն ու երգիչը կրկին եկան Ալչիդեի հյուղակի մոտ: Դուռը թակելու կարիք չեղավ, որովհետև տղան, ինչպես և առաջին հանդիպման ժամանակ, նստած էր շեմին և կիթառ էր նվագում:

– Ինչպե՞ս, զարմացած բացականչեցին ընկերները, դու դեռ կիթա՞ռդ ես ծնգծնգացնում:

– Էլ ի՞նչ է մնում անելու, եթե գզգզված ագռավը հին բերետիս հետ տարավ իմ երջանկությունը, ընկճված պատասխանեց Ալչիդեն և պատմեց ձեզ արդեն հայտնի համառոտ, բայց տխուր պատմությունը:

– Դե՛, բանաստեղծին դարձավ երգիչը, մի՞թե ես չէի ասում, որ երջանկություն և դժբախտություն ճակատագիրն է ուղարկում: Լավ, ասենք թե ագռավը որոշել էր իր բնում ոչ թե չոր ճյուղերի, այլ փափուկ լաթի վրա քնել: Բայց բացատրիր, խնդրում եմ, ինչո՞ւ ագռավին Ալչիդեի գլխարկը պետք եկավ հենց այն պահին, երբ տղան դրա մեջ թաքցրեց փողը:

– Հիմարությո՛ւն, ընդհատեց երգչին բանաստեղծը: Եթե ագռավը չտաներ դրամները, Ալչիդեն հիմա հրաշալի կապրեր: Ճիշտ չէ՞, ընկե՛րս, փողն ամեն ինչ է:

Այս ասելով՝ բանաստեղծը դարձյալ ձեռքը տարավ գրպանը, հանեց ևս հարյուր սկուդո և մեկնեց Ալչիդեին: Տղան ջերմորեն շնորհակալություն հայտնեց, բայց ընկերները ձեռքները թափ տվեցին, խոստացան վերադառնալ ուղիղ մեկ տարի հետո և գնացին:

Այս անգամ Ալչիդեն որոշեց ավելի շրջահայաց լինել: Ուղևորվելով դեպի կրպակ՝ նրբերշիկ գնելու (հիշում եք, չէ՞, որ մեկ տարի առաջ նրան այդպես էլ չհաջողվեց նրբերշիկ ուտել), Ալչիդեն մի արծաթե դրամ դրեց բերանի մեջ, իսկ մնացած իննսունինն

ապահով թաքցրեց... որտեղ, ինչ եք կարծում... անկյունում ընկած հին կոշիկի մեջ:

– Հիմա արդեն ոչ մի ագռավ դրան չի հասնի, իր խորամանկությունից շատ գոհ՝ ասաց Ալչիդեն: Գողն էլ այսպիսի հնոտու չի մոտենա:

Բայց երբ Ալչիդեն գնաց կրպակ, ահա թե ինչ տեղի ունեցավ: Խրճիթ մտավ հարևանի կատուն, որին տերերը կերակրում էին միայն այն ժամանակ, երբ իրենք կշտանում էին, իսկ այդպես երբեք չէր լինում: Կատուն շրջեց ամբողջ սենյակում, բայց ուտելու ոչ մի բան չգտավ: Հանկարծ բնից դուրս վազեց մուկը: Կատուն ընկավ մկան հետևից: Մուկը դեսուդեն վազեց և խցկվեց հենց կոշիկի մեջ՝ նույն կոշիկի, որի մեջ Ալչիդեն թաքցրել էր փողը: Կատուն մի ակնթարթում շրջեց կոշիկը, դրամները գլորվեցին, իսկ մուկը սողոսկեց իր բույնը: Այդ ժամանակ կատուն սկսեց խաղալ փողերով. գլորում էր դրանք ու խցկում մկան բույնը: Այդպես՝ մինչև վերջին սկուդոն: Երբ Ալչիդեն կրպակից վերադարձավ, պարզեց, որ ինքն այժմ ավելի հարուստ չէ, քան երեկ էր: Փողն անհետացել էր: Լավ էր գոնե, որ այս անգամ նրան հաջողվեց նրբերշիկ ուտել: Ահա թե ինչու զարմանալի չէ, որ երբ մեկ տարի հետո երգիչն ու բանաստեղծը կրկին եկան այստեղ, Ալչիդեն հին հյուղակի շեմին նստած դարձյալ կիթառ էր նվագում:

– Դե՛, բացականչեց բանաստեղծը, սա արդեն բանի նման չէ: Գուցե այս անգամ էլ մեզ հավատացնես, որ հարյուր սկուդոն մկնե՞րն են տարել:

– Ավա՜ղ, բարի պարոններ, հոգոց հանեց Ալչիդեն, ես ձեզ ոչինչ էլ չեմ կարողանա ասել, որովհետև ինքս էլ չգիտեմ, թե ուր կորան փողերը:

– Հիմա գոնե համոզվեցի՞ր, որ ամեն ինչ ճակատագիրն է որոշում, ասաց երգիչը բանաստեղծին:

– Հակառակը, պատասխանեց բանաստեղծը, ավելի համոզվեցի, որ միայն փողն է մարդուն երջանիկ դարձնում: Բայց իմ

ճշմարտացիությունն ապացուցել այլևս չեմ փորձի: Դա շատ թանկ է նստում ինձ վրա: Հիմա էլ դու ապացուցիր:

– Փորձեմ, ասաց երգիչը: Նա փորփրեց գրպանն ու այնտեղից մի փոքրիկ կապարե գնդիկ հանեց: Ճիշտն ասած, երգիչն ինքն էլ չէր հիշում, թե դա ինչ գնդիկ է և ինչպես է հայտնվել իր գրպանում:

– Վերցրո՛ւ, խեղճ տղա, ասաց երգիչը՝ գնդիկն Ալչիդեին մեկնելով: Գուցե սա քեզ փողից առավել պետք գա:

Ընկերները հրաժեշտ տվեցին ու գնացին:

Գնդիկը երկար ժամանակ մնացել էր երգչի գրպանում, բայց շատ ավելի երկար մնաց Ալչիդեի գրպանում: Գնդիկի մասին պատանին հիշեց միայն այն ժամանակ, երբ փորը քաղցից լրիվ սմքեց: Նույնիսկ կիթառը չէր օգնում նրան: Ալչիդեն գնդիկը հանեց գրպանից, ափի մեջ այսուայն կողմ գլորեց ու մտածեց. «Վաճառեմ՝ սրա համար ինձ մի սալդո անգամ չեն տա: Բայց եթե ինչ-որ մեկը սա սարքել է, նշանակում է՝ ինչ-որ բանի պետք է, չէ՞»: Հանկարծ Ալչիդեն ձեռքը խփեց ճակատին.

– Ո՜նց մինչև հիմա գլխի չէի ընկել: Ախր սա գերազանց սուզագնդիկ կլինի:

Տղան կտրեց ուռենու մի ճկուն, երկար ճյուղ, քորոցը կեռիկի պես ծալեց, գնդիկն էլ ամուր թելով կապեց դրան: Մի խոսքով՝ մեկ ժամից Ալչիդեն նստած էր ծովափին և փորձում էր ձուկ որսալ: Բայց ձուկը, ասես նրան հակառակ, չէր մոտենում խայծին: Ալչիդեն ափին նստեց առավոտից մինչև կեսօր, ապա՝ կեսօրից մինչև երեկո: Մեկ ուրիշը նրա փոխարեն ձեռք կքաշեր այդ գործից, բայց Ալչիդեն շուտ հուսահատվողներից չէր: Եթե որևէ բան էր նախաձեռնում, գործը միշտ ավարտին էր հասցնում: Նա որոշեց ձկներից ավելի համառ լինել: Եվ կարողացավ: Մայրամուտի ժամանակ ձկներն սկսեցին մոտենալ խայծին: Պատանի ձկնորսը հազիվ էր հասցնում ձուկը հանել ջրից և կարթը նորից ջուրը նետել: Այդ գիշեր Ալչիդեն շատ համով ձկնապուր կերավ: Ձուկն

այնքան շատ էր, որ վաղ առավոտյան տղան որսի կեսը վաճառեց շուկայում: Հետո կրկին վազեց ծովափ: Եվ սկսվեց: Կարթը բռնած՝ օրերով նստում էր ծովափին: Կես տարի անց նա մի ուռկան ձեռք բերեց, ևս կես տարի անց՝ մի նավակ ու դարձավ իսկական ձկնորս:

Իսկ բանաստեղծն ու երգիչը... Ի՞նչ պատահեց նրանց: Օ՜, նրանք այնքան զբաղված էին, որ մոռացել էին աղքատ կիթառահարին: Երկուսն էլ մեկնեցին հեռավոր ճանապարհորդության՝ մեկը՝ արևելք, մյուսը՝ արևմուտք: Հինգ տարի անց նրանք հանդիպեցին հայրենի քաղաքում: Հիշեցին Ալչիդեին և որոշեցին այցելել նրան: Եկան նույն տեղը, որտեղ հանդիպել էին տղային: Նայում են՝ խրճիթը չկա: Փոխարենը մի սիրուն տնակ է, տնակի մոտ երկու երեխա խաղում են, իսկ երեխաներին ժպտում է շեմի մոտ կանգնած ջահել տանտիրուհին: Ընկերները մոտեցան և հարցրին կնոջը.

– Դուք չգիտե՞ք, թե հիմա որտեղ է ապրում կիթառահար Ալչիդեն:

– Ինչպե՞ս չէ, գիտեմ,– պատասխանեց կինը, շրջվեց և կանչեց,– ամուսնյա՛կ, երկու հարգարժան պարոն քեզ են հարցնում:

Կնոջ կանչի վրա տնից դուրս եկավ նրա ամուսինը՝ Ալչիդեն: Սկսվեց հարցուփորձը: Նստեցին շեմի մոտ, և Ալչիդեն հերթով պատմեց այն, ինչը դուք արդեն գիտեք: Դա չենք պատմի, իսկ ինչը դեռ չգիտեք, հիմա լսեք:

– ...Այդպես, թանկագի՛ն պարոններ, ես նավակ և մի լավ ուռկան գնեցի ու դարձա ձկնորս: Հետո ինձ դուր եկավ Ջովաննան, ես էլ՝ նրան: Այդ գործում, խոստովանում եմ, ինձ օգնեց կիթառս: Երեք ամիս չանցած՝ մենք ամուսնացանք: Դե՛, ջահել կնոջն ավերակ խրճիթը չէր սազում: Որոշեցինք այս նույն տեղում տնակ կառուցել: Քանդեցինք հին խրճիթը... Հիմա, թանկագին պարոններ, ուշադիր լսեք, սա ձեզ էլ է վերաբերում: Քանդեցինք... Հին ծխնելույզի մեջ ագռավի մի լքված բույն կար, բնում՝ իմ գլխարկը,

գլխարկի մեջ՝ հարյուր սկուդո: Ես շատ ուրախ եմ, որ վերջապես հին պարտքս էլ կվերադարձնեմ:

Ալչիդեն վազեց ներս, բերեց քրքրված բերետը, որի մեջ զնգզնգում էին դրամները: Նա բանաստեղծին և երգչին հիսունական սկուդո տվեց և շարունակեց պատմությունը:

– Սա դեռ ամենը չէ: Հենց խրճիթի հատակը քանդեցինք, անկյունում՝ մկան բնում, իննսունինը սկուդո գտանք: Հարյուրերորդը ես այն ժամանակ ծախսել էի նրբերշիկի համար: Հիմա այդ պակասող դրամը դրել եմ տեղը:

– Ջովաննան մտավ տուն և բերեց գեղեցիկ կապված քսակը, մեջը՝ հարյուր սկուդո: Ալչիդեն այն տվեց բանաստեղծին:

– Իսկ գնդիկը ես կպահեմ որպես հիշատակ, ասաց Ալչիդեն:

Նա պատմությունն ավարտեց, իսկ ընկերների միջև բորբոքվեց նույն վեճը: «Ճակատագի՛ր»,– գոռում էր երգիչը: «Փո՛ղ»,– ավելի բարձր էր գոռում բանաստեղծը: Կրկին հիշեցին թե՛ հորաքրոջ ժառանգությունը, թե՛ կոմս Լուիջիի պատահական զբոսանքը նավակով: Ալչիդեն, որ ուշադիր լսում էր նրանց, վերջապես միջամտեց.

– Թո՛ւյլ տվեք ես էլ իմ խոսքն ասեմ: Փողը՝ փող, ճակատագիրը՝ ճակատագիր, բայց, հավատացեք ինձ, որ գլխավորն աշխատանքն ու համառությունն են: Գուցե հորաքրոջ ժառանգությունն իսկապես օգնել է Ձեզ, պարոն բանաստեղծ, բայց չէ՞ որ Դուք երկար տարիներ աղքատ էիք ու չճանաչված և շարունակում էիք գրել: Ձեզ, պարո՛ն երգիչ, հոչակ բերեց կոմս Լուիջին, բայց չէ՞ որ մինչև այն երջանիկ պահը, երբ նա Ձեզ լսեց, Դուք չէիք դադարում երգելուց: Իսկ ինչ ինձ է վերաբերում, ապա այն ամենը, ինչ ես հիմա ունեմ, իմ սեփական աշխատանքի արդյունքն է:

Բանաստեղծն ու երգիչը մի պահ լռեցին, ապա միաձայն բացականչեցին.

– Տիրամայրը վկա, ճի՛շտ է ասում:

Մեր պապն ու թոռը

Լինում է, չի լինում՝ մի զառամյալ ծերունի է լինում: Օրեցօր նա կորցնում էր տեսողությունը, լսողությունը, քայլվածքն անհաստատ էր դառնում: Ճաշի սեղանի մոտ հազիվ էր գդալը ձեռքում պահում. ձեռքը դողդողում էր, ապուրը գդալից թափվում էր սփռոցին, մեկ-մեկ էլ բերանից էր թափվում: Սեղանի մոտ ծերունուն տեսնելը տհաճ էր դարձել, և նրա որդին ու հարսը որոշում են, որ ծեր պապը պետք է ճաշի առանձին՝ վառարանի հետևի անկյունում: Ուտելիքը նրան կավե ամանով այնտեղ էին տալիս, այն էլ՝ ոչ բավարար չափով: Իր անկյունից ծերունին տխուր նայում էր սեղանի կողմը, և աչքերը խոնավանում էին արցունքից:

Մի անգամ նրա թույլ, դողդողացող ձեռքերը չկարողացան ամուր պահել կավե ամանը. այն ընկավ և փշուր-փշուր եղավ: Ջահել հարսը բարկացավ, սկսեց ամոթանք տալ նրան: Ծերունին ոչինչ չէր ասում, միայն հոգոց էր քաշում: Կավե ամանին փոխա-

րինելու եկավ փայտե էժանագին գավաթը, որը մի զույգ գելլերով էին գնել:

Մի օր ծերունու որդին ու հարսը տեսան, որ իրենց չորսամյա որդին, հատակին նստած, փորձում է չորս տախտակ իրար ամրացնել:

– Ի՞նչ ես անում, տղաս, հարցրեց հայրը:

– Փայտե տաշտակ եմ սարքում, որ երբ մեծանամ, ձեզ այս տաշտակից կերակրեմ, պատասխանեց փոքրիկը:

Ամուսիններն իրար նայեցին և արտասվեցին: Հենց նույն պահին ծեր պապին տեղափոխեցին սեղանի մոտ և դրանից հետո միշտ ճաշում էին նրա հետ՝ ոչինչ չասելով նաև այն ժամանակ, երբ ծերունին ուտելիքը թափթփում էր սեղանին:

Հավատարիմ բազեն

Պատմում են, որ ժամանակով ռաջաներից մեկն ունեցել է մի սիրելի բազե:

Մի անգամ, բազեն նստեցնելով իր թևին, ռաջան գնում է որսի: Եվ հանկարծ ի՞նչ է տեսնում... Մի այծքաղ է վազում: Ռաջան խթանում է ձին, ընկնում այծքաղի հետևից ու սլանում հեռո՛ւ-հեռու: Շքախումբն աշխատում էր հետ չմնալ ռաջայից, բայց չի կարողանում հասնել նրան ու տիրոջը կորցնում է տեսողությունից: Իսկ ռաջան այնքան է հետապնդում այծքաղին, որ ուժասպառ է լինում ու երկարատև արշավից ծարավում:

Նա ձիով երկար պտտվում է սարերում՝ անընդհատ աղբյուր փնտրելով: Վերջապես հասնում է մի բարձր լեռան ստորոտի ու տեսնում, որ լեռան գագաթից դանդաղ ջուր է կաթկթում: Ռաջան պարկից հանում է թասն ու սկսում նրա մեջ կաթիլ առ կաթիլ հավաքել ջուրը: Երբ թասը լցվում է, ռաջան արդեն մոտեցնում է շրթունքներին, որ խմի, հանկարծ բազեն խփում է թևով ու ամբողջ ջուրը թափում: Ռաջան բարկանում է բազեի վրա և թասը

նորից պահում ջրի կաթիլների տակ: Որոշ ժամանակ անց թասը մի անգամ էլ է լցվում, և ռաջան տանում է շրթունքներին, սակայն բազեն թասը գցում է նրա ձեռքից և ամբողջ ջուրը թափում: Զայրանում է ռաջան, բազեին զարկում գետին ու սպանում:

Այդ նույն պահին ռաջայի մոտ է սլանում նրա ծառան: Նա անմիջապես արծաթից թասի մեջ ջուր է լցնում ու ցանկանում է հրամցնել իր տիրոջը, բայց նա ասում է, որ ուզում է խմել մաքուր, սառը ջուր, այն ջուրը, որ հոսում է ժայռից:

– Բարձրացիր ժայռի վրա, աղբյուրից ջուր լցրու ու բեր,– ասում է նա,– ես չեմ ցանկանում սպասել, մինչև որ ջուրը կաթիլ առ կաթիլ հավաքվի թասի մեջ:

Ձիապանը բարձրանում է սարի գագաթը, հասնում աղբյուրին և ի՞նչ տեսնում... Զառիթափի ծայրին ընկած է մի սատկած օձ. նրա թունավոր թուքը խառնվում էր ջրին և կաթիլ առ կաթիլ թափվում ժայռից:

Իջնելով ներքև՝ ձիապանն իր տեսածը պատմում է ռաջային, իսկ հետո տկից ջուր է լցնում թասի մեջ ու տալիս տիրոջը, բայց ռաջայի ծարավն անցել էր: Նա արտասվում ու, նայելով մահացած բազեին, անիծում է իր անհամբերությունը:

Իզուր հո չի ասված՝ իմաստունն առանց մտածելու ոչինչ չի անում:

Մորսերը

Վաղուց, շատ վաղուց Քեսոն քաղաքից ոչ հեռու մի գյուղում ապրում էր մի չունևոր ընտանիք: Մարդն աշխատում էր դաշտում՝ հարուստ հարևանի մոտ, իսկ կինը բրնձի հացեր էր թխում և ծախում: Այսպես էլ ապրում էին նրանք՝ մի կերպ ծայրը ծայրին հասցնելով:

– Սրանք ունեին մի որդի՝ անունը Հան Սեկ Բոն, որին իրենց կյանքից ավելի էին սիրում: Համերաշխ էր ապրում այս խեղճ ընտանիքը, մինչև վրա հասավ մի անդառնալի դժբախտություն. հայրը ծանր հիվանդացավ ու մեռավ:

– Մեռնելիս նա կանչեց կնոջը և ասաց.

– Այնպես արա, որ մեր որդին գիտնական դառնա, և այն ժամանակ բոլորը կհարգեն ու կպատվեն նրան:

– Կինը խոստացավ կատարել ամուսնու վերջին ցանկությունը:

– Երբ Հան Սեկ Բոնի յոթ տարին լրացավ, մայրն ասաց.

– Հորդ կամքը կատարելու ժամանակն է: Դու պետք է տասը տարի սովորես: Այդքան ժամանակում դու հազարավոր հիե-

րոգլիֆներ կճանաչես, հիանալի ոտանավորներ անգիր կանես, բժշկություն կսովորես և կկարդաս փիլիսոփաների գրքերը: Դրանից հետո դու կարող ես Սեուլում քննություն տալ և գիտնական կդառնաս, ինչպես քո հայրն էր ցանկանում:

– Հան Սեկ Բոնը գնաց Քեսոն՝ սովորելու, և մայրը մենակ մնաց իրենց փոքրիկ տնակում: Գյուղում ոչ ոք նրանից լավ հաց չէր թխում: Նրա թխած հացերը համեղ էին, փափուկ, գեղեցիկ ու միահավասար, այդ պատճառով էլ բոլոր հարևանները միայն նրանից էին հաց գնում:

– Ամեն երեկո մայրը մտածում էր իր տղայի մասին: Կարոտում էր նրան, տխուր-տրտում նստում ու լաց էր լինում: Ամեն գիշեր մայրը հաշվում էր, թե քանի տարի, քանի ամիս ու օր է մնացել մինչև իր թանկագին որդուն տեսնելը: Բայց մինչև նրա գալը դեռ շատ ժամանակ էր մնում:

– Եվ ահա մի երեկո մայրը իրենց խրճիթի մոտ քայլերի ձայն լսեց: Նա դուռը բացեց ու տեսավ, որ եկողն իր որդին է:

– Մայրն զգաց, որ Հան Սեկ Բոնը երկար ճանապարհ կտրելով շատ է հոգնել: Ցանկացավ առաջ նետվել և որդուն կրծքին սեղմել, բայց այդպիսի բան չարեց: Նա նույնիսկ չժպտաց որդու երեսին, այլ միայն հարցրեց.

– Ինչո՞ւ ես վերադարձել ժամանակից շուտ: Մի՞թե արդեն ամեն բան սովորել ես և կարող ես քննություն տալ:

– Հան Սեկ Բոնն այդպիսի սառն ընդունելության չէր սպասում: Նա լաց եղավ և ասաց.

– Քանի՞-քանի տասնյակ լի ճանապարհ եմ անցել ոտքով և երեկ առավոտվանից ոչինչ չեմ կերել: Նախ ինձ մի բան տուր ուտելու, հետո ես ամեն ինչ կպատմեմ:

– Ա՜խ, որքա՜ն էր ուզում մայրը գրկել որդուն, համբուրել, տանը եղած ամենալավ բաները նրա առաջ դնել, որ ուտի, հետո փափուկ անկողնում պառկեցնել, որ հանգիստ քնի: Բայց նա սրանցից ոչ մեկը չարեց, այլ նորից հարցրեց.

– Միթե դու արդեն սովորել ես բոլոր գիտությունները, որ պիտի սովորեիր տասը տարում:

– Որդին պատասխանեց.

– Ես սովորել եմ բոլոր գիտությունները, որ պիտի սովորեի տասը տարում, դրա համար էլ ժամանակից շուտ եմ վերադարձել:

– Դե ուրեմն վերցրու վրձինը, տուշն ու թուղթը և գրիր առաջին տասը հիերոգլիֆները, ասաց մայրը:

– Երբ որդին իր գոտուց կախված տոպրակից տուշն ու վրձինը հանեց, մայրը ճրագը փչեց ու ասաց.

– Մթության մեջ դու հիերոգլիֆներ նկարիր, իսկ ես հաց կթխեմ:

– Քիչ ժամանակ անց մայրն ասաց.

– Հացը պատրաստ է:

– Այս ասելով՝ նա նորից ճրագը վառեց: Հան Սեկ Բոնը մորը ցույց տվեց իր աշխատանքը: Մթության մեջ հիերոգլիֆները տգեղ ու անհավասար էին ստացվել:

– Այդ ժամանակ մայրն ասաց.

– Նայի՛ր իմ հացերին:

– Հան Սեկ Բոնը նայեց հացերին: Դրանք միահավասար էին, գեղեցիկ, կանոնավոր, ասես մայրը պայծառ լույսի ժամանակ էր թխել:

– Եվ մայրը ձեռքը դրեց որդու ուսին ու ասաց.

– Վերադարձիր Քեսոն և տուն կգաս, երբ լրիվ ու կատարյալ կիմանաս այն ամենը, ինչ պետք է:

– Հան Սեկ Բոնն սկսեց աղաչել.

– Թո՛ւյլ տուր գոնե մինչև առավոտ մնամ այստեղ: Օր ու գիշեր որքա՛ն ճանապարհ եմ անցել առանց հանգստանալու և հիմա այլևս ուժ չունեմ այդքան հեռու ճամփա գնալու:

– Դու հանգստանալու ժամանակ չունես, խստորեն պատասխանեց մայրը: Ահա քեզ մի քանի հաց՝ ճանապարհի համար: Բարի ճանապարհ:

– Մութ գիշերին Հան Սեկ Բոնը գնաց լեռնային շավիղներով:

余出於衆
仁義克全日
人者又身友之
肉数十年如一

Ծանր էր հնադարյան Քեսոն քաղաքի ճանապարհը: Քանի՛ քանի լեռնային գետակներ էին կտրում այն, իսկ մոտերքում հաճախ գազանների ոռնոց էր լսվում:

– Հան Սեկ Բոնը գնում էր դառը-դառը լաց լինելով: Նրան թվում էր, թե մայրն անարդար և դաժան վարվեց իր հետ, թե իր՝ Քեսոնում եղած տարիների ընթացքում մայրը սառել է իրենից և այլևս չի սիրում իրեն:

– Առավոտյան նա բաց արեց այն շորը, որի մեջ մայրը հացերն էր կապել, և նորից տեսավ, որ մթության մեջ թխված այդ հացերը հիանալի էին՝ միանման, միահավասար:

– Այդ ժամանակ Հան Սեկ Բոնը առաջին անգամ մտածեց. «Մայրս կարողացել է մթության մեջ լավ կատարել իր գործը, իսկ ես չկարողացա: Նշանակում է՝ նա իր գործն ավելի լավ է անում, քան ես»:

– Այսպես մտածելով՝ Հան Սեկ Բոնն շտապեց դեպի Քեսոն…

– Անցավ էլի հինգ տարի, և մի երեկո մայրը նորից քայլերի ձայն լսեց իրենց տնակի մոտ: Նա բաց արեց դուռը և նորից տեսավ իր որդուն:

– Հան Սեկ Բոնը ձեռքերը մեկնեց մորը, բայց մայրն ասաց.

– Արդյոք բոլո՞ր գիտություններն ես լրիվ սովորել, որ տուն ես եկել:

– Բոլո՛րը, պատասխանեց որդին:

– Եվ տոպրակից վրձին, տուշ ու թուղթ հանելով՝ նա ճրագը հանգցրեց:

– Մի տասը րոպեից հետո Հան Սեկ Բոնն ասաց.

– Կարող ես ճրագը վառել…

– Մայրը սենյակը լուսավորեց և մոտեցավ որդուն: Նրա առաջ փռված էր մի թերթ թուղթ, որի վրա գրված հիերոգլիֆները գեղեցիկ էին, պարզ, միահավասար:

– Եվ այն ժամանակ մայրն ասաց.

– Ինչպես էի ես սպասում քեզ, զավակս, որքան էի կարոտել քեզ: Եկ մի պինդ կրծքիս սեղմեմ քեզ և կարոտս առնեմ:

... Տարիներ անցան, և Հան Սեկ Բոնը մեծանուն գիտնական դարձավ: Եվ երբ իր աշակերտները հարցնում էին նրան, թե ինչպես է այդքան մեծ գիտնական դարձել, Հան Սեկ Բոնը պատասխանում էր.

– Մորս սերն ինձ սովորեցրեց չխնայել ինձ, ամեն ինչ կատարել լավ ու ազնվորեն: Իսկ ով ամեն ինչ լավ է կատարում և ազնվորեն, նա ինչ ուզի՝ կդառնա:

Եզը, որ կատարեց իր խոստումը

Շատ ժամանակ առաջ մի փոքրիկ գյուղում Դեմափալ անունով մի մարդ էր ապրում: Նա մի ուժեղ եզ ուներ և միշտ պարծենում էր նրանով:

Մի օր նա ասաց ընկերներին.

- Ես հարյուր արծաթ կբաժանեմ աղքատներին, թե որ իմ եզը միանգամից հարյուր սայլ չկարողանա քաշել:

Ընկերները մտածեցին, որ Դեմափալը խելքը թոցրել է, և մի կուշտ ծիծաղեցին:

- Շատ լավ, բեր փորձենք եզիդ,- ասացին նրանք:

Հաջորդ օրը վաղ առավոտյան Դեմափալը եզին գյուղամեջ բերեց: Հարյուր սայլ կցեցին իրար, և եզին լծեցին առջևի սայլին: Մեծ բազմություն էր հավաքվել դիտելու այդ տեսարանը: Դեմափալը, վստահ իր հաղթանակին, վերցրեց մտրակն ու սկսեց հարվածել եզին:

- Դե գնա, անպիտան, դե քաշիր, թշվառական,- ասում էր նա:

Բայց եզը տեղից չէր շարժվում: Նա սովոր չէր այդպիսի բառերի, ոչ էլ նման վերաբերմունքի: Եվ որոշեց տեղից չշարժվել: Տեսնելով եզի համառությունը՝ Դեմափալը ստիպված հարյուր արծաթ վճարեց գյուղացիներին:

Հետո դժբախտ մարդը տուն հասավ և իրեն գցեց մահճակալին:

«Ախր, իմ եզը ավելի ծանր բեռների է սովոր, այսօր ինչո՞ւ համառեց: Ինչո՞ւ ինձ խայտառակեց գյուղացիների մոտ»,- հարցնում էր նա ինքն իրեն:

Որոշ ժամանակ անց Դեմափալը սովորականի նման իր գործին անցավ: Երբ կերակրում էր եզին, վերջինս դարձավ նրան ու ասաց.

- Ինչո՞ւ այսօր էդպես վատ վարվեցիր ինձ հետ: Առաջ դու ինձ երբեք չէիր մտրակել ու ոչ էլ էդպիսի վատ բառեր էիր ասել:

Դեմափալը հասկացավ և շատ զղջաց իր արարքի համար ու խոստացավ այլևս երբեք այդպիսի բան չանել: Եզը խղճաց տիրոջն ու ասաց.

- Վաղը ինձ նորից գյուղամեջ տար: Ես կքաշեմ հարյուր սայլը, և դու ետ կբերես կորցրածդ հարյուր արծաթը:

Մյուս օրը, առավոտ վաղ նրանք գնացին գյուղամեջ: Հենց որ գյուղացիները տեսան նրանց, սկսեցին աղմկել և ձեռ առնել: Նրանք հարցրին Դեմափալին, թե նորից փող տարվելու միտք չունի արդյոք:

Դեմափալը հպարտ պատասխանեց.

- Այսօր ես պատրաստ եմ վճարելու երկու հարյուր արծաթ, եթե իմ եզը չկարողանա հարյուր սայլ քաշել:

Եվ եզին նորից լծեցին: Եվ դարձյալ մեծ բազմություն էր հավաքվել: Այս անգամ Դեմափալը շատ քնքշորեն էր վարվում եզի հետ:

- Անուշի՛կս, քաշիր, ինչքան որ ուժ ունես:

Այդ խոսքերի վրա եզը շարժվեց, իսկ նրա հետևից՝ հարյուր

սայլը: Նա գնաց այնքան, մինչև վերջին սայլը հասավ առաջինի տեղը:

Մարդիկ զարմացան և ստիպված եղան վճարել ամբողջ գումարը, որը երկու անգամ ավելի էր Դեմափալի նախորդ օրվա կորցրածից:

Եզը և նրա տերը, փողն առած, ուրախ-ուրախ տուն վերադարձան:

Աղքատն ու երջանկությունը

Մի անգամ երեկոյան մի աղքատ մարդ տուն էր վերադառնում: Անիծելով իր բախտը՝ նա դառնությամբ բողոքում էր.

– Երջանկությո՛ւն... Ի՞նչ է Երջանկությունը, ո՞ւր է նա: Թող այդ Երջանկությունն էլ անիծյալ լինի:

– Ճակատագիրը կամեցավ, որ Երջանկությունն արձագանքի աղքատին, գա և լսի նրա բողոքն ու հեծեծանքը: Եվ ահա, հենց որ աղքատն ավարտեց խոսքը, Երջանկությունը բռնեց նրա ձեռքը և ասաց.

– Արի՛, մի՛ վախեցիր, ես քո Երջանկությունն եմ:

Երջանկությունն աղքատին վեր բարձրացրեց ու տարավ հեռու-հեռու, հետո մի քարանձավի մուտքի մոտ իջեցրեց և ասաց.

– Այնտեղ՝ քարանձավի ներսում, աշխարհի բոլոր գանձերն են պահված: Ներս գնա և վերցրո՛ւ ինչ կուզես: Բայց չափից շատ չվերցնես. թող բեռդ թեթև լինի, որպեսզի կարողանաս մինչև տուն հասցնել: Ճանապարհը երկար է ու դժվար, իսկ դու մենակ

ես գնալու՝ առանց ուղեկցի: Եթե բեռդ ցած դնես, ընդմիշտ կկորցնես գտածդ գանձը: Խելամի՛տ եղիր՝ ագահություն չանես:

Այսպես ասաց Երջանկությունն ու անհետացավ: Աղքատը մտավ քարանձավ: Անհամար գանձերի, թանկարժեք քարերի, ոսկու և արծաթի առատությունից գլուխը պտտվեց, աչքերն ասես դուրս եկան բներից: Նա սկսեց ընտրել ամենագեղեցիկներն ու տեղավորել իր պարկում, որը միշտ ուսին էր: Լցրեց, լցրեց այնքան, որ էլ տեղ չմնաց և դուրս եկավ քարանձավից՝ ծանր բեռն ուսին: Հազիվ մի քանի քայլ էր արել, երբ զգաց, որ բեռան ծանրությունից շունչը կտրվում է, քրտինքը հոսում է դեմքով, մարմնով: Այդպես անհնար էր ճանապարհը շարունակել: «Իսկ ի՞նչ կլինի, եթե պարկը դնեմ գետնին և գլորելով տուն հասցնեմ»,– մտածեց նա և այդպես էլ արեց: Ինքն իրենից գոհ, որ լուծումը գտավ, և երջանիկ, որ այդ մեծ հարստությունն իրեն է պատկանում, աղքատն սկսեց բերնեբերան լցված պարկը գլորել դեպի տուն: Քիչ, շատ քիչ էր մնացել տուն հասնելուն, երբ նա մի պահ ուղղեց մեջքը, և հենց նույն պահին պարկն անհետացավ: Աղքատը դեսուդեն ընկավ, սկսեց գոռգոռալ, լաց լինել, անիծել իրեն բաժին ընկած բախտը: Եվ կրկին նրա դիմաց կանգնեց Երջանկությունը՝ այս անգամ ցասկոտ հայացքով, և ասաց.

– Դու ինքդ ես մեղավոր քո և քո Երջանկության համար: Քեզ ոչինչ չի գոհացնում: Քեզ շատ տրվեց, բայց դու պետք է վերցնեիր այնքան, որքան կկարողանայիր կրել: Ագահությունդ հաղթեց, և ուսերիդ քո ուժից վեր բեռ վերցրիր: Հիմա դու կորցրիր ամեն ինչ: Թող սա դաս լինի քեզ համար. սովորիր քչով բավարարվել: Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի:

Հաճույքը

Շատ ծույլ մի տղա էր ապրում: Օրերով մի տեղից մեկ ուրիշ տեղ էր գնում, անիմաստ դեսուդեն ընկնում: Չկար որևէ բան, որ դուր գար նրան, և չկար որևէ բան, որից հաճույք ստանար: «Ինչ է հաճույքը, չգիտեմ», մի օր մտածեց նա և որոշեց փնտրել ու գտնել այն: Տնից դուրս եկավ, ճանապարհ ընկավ: Գնաց, գնաց և շուտով հայտնվեց բարձր սարի ստորոտում, որն իր ճանապարհը փակում էր: Մի ծեր գյուղացի այդտեղ հողն էր փորում:

– Պապիկ, դու գուցե գիտես, թե ինչ է հաճույքը, հարցրեց պատանին ծերունուն:

– Գիտեմ, պատասխանեց ծերունին՝ աշխատանքը չընդհատելով, բայց եթե ես հիմա քեզ հետ զրույցի բռնվեմ, չեմ կարողանա աշխատել:

– Ես քո փոխարեն կաշխատեմ, իսկ դու ասա, լավ, առաջարկեց տղան:

– Լավ:

Տղան վերցրեց բահն ու սկսեց փորել: Արևն այրում էր մեջքը, ողջ մարմինը պատվել էր քրտինքով, բայց եթե գործը չաներ, ծեր գյուղացին չէր ասի՝ ինչ բան է այդ հաճույք կոչվածը: Եվ պատանին շարունակեց աշխատել: Իսկ ծերունին նստեց ծառի տակ ու սկսեց հետևել տղայի գործին: Երկու ժամ անց ձայն տվեց.

– Հեյ, տղա՛, արի՛, հանգստացի՛ր մի քիչ:

Պատանին ցած գցեց ձեռքի բահն ու նստեց ծեր գյուղացու մոտ՝ ծառի զով, հաճելի ստվերում:

– Ինչ լավ է, ա՛յ քեզ հաճույք, ակամա բացականչեց նա:

– Ճի՛շտ է, հաստատեց ծերունին, հաճույքը հենց սա է: Եթե եռանդով աշխատես, հաճույքն ինքը քեզ կգտնի:

Ագահը

Մի գյուղում մի հարուստ ջրաղացպան էր կենում իր կնոջ հետ: Նրանց կողքին էլ՝ իր աղքատ խրճիթում, մի պառավ էր ապրում: Պառավի ունեցած-չունեցածը մի քանի հավ ու ճիվ էր, բայց ջրաղացպանի կինը, որ ամեն ինչ ուներ ու էլի դժգոհ էր իր կյանքից, ամեն Աստծո օր պառավից մի հավ էր գողանում:

Առավոտ շուտ պառավը դուրս էր գալիս, հավերը հաշվում էր ու տեսնում, որ մի հավ պակասել է. մեկ սպիտակ հավերից էր կորչում, մեկ՝ չալպուտուրիկներից:

Պառավը համ գիտեր, թե ով է իր հավերը գողանում, համ էլ ձայն չէր հանում, մտածում էր. «Վերջն ինքը խայտառակ կլինի. ով ինչ անի՝ իրեն կանի»:

Մի օր էլ ջրաղացպանը շուկայից գալիս, տուն է մտնում ու տեղում քարանում. ի՞նչ տեսնի՝ կնոջ երեսին ու մարմնի վրա հավի փետուրներ են աճել, ինքն էլ թխսի պես կչկչում ու դեսուդեն է թռչկոտում:

– Ա՛յ կնիկ, չեմ հասկանում՝ էս ի՞նչ ես դառել,– հարցնում է ջրաղացպանը:

– Կարող է պառավի հավերը գողանալու համար է էս փորձանքը գլխիս եկել,– հանցանքը խոստովանում է կինը:

Ջրաղացպանն անմիջապես գրբացի մոտ է գնում:

– Կինս մեղք է գործել. հարևան խեղճ պառավի հավերը գողացել է, ու էդ պատճառով երեսին ու մարմնին հավի փետուրներ են դուրս եկել,– ասում է ու խնդրում, որ իրենց այդ փորձանքից ազատի:

Գրբացը թե՝

– Իսկ պառավը չի՞ անիծել, չի՞ կռվել, հայհոյել:

– Չէ՛,– ասում է ջրաղացպանը,– ձայն-ծպտուն չի հանել, բայց, եթե իմացվի, գյուղով մեկ կխայտառակվենք, գետինը կմտնենք: Ախր, փետուրները ո՞նց թաքցնենք:

– Հենց վատն էլ էն է, որ պառավը ձայն չի հանել,– ասում է գրբացը:

Ջրաղացպանը հետ է գալիս, պառավի տուն է մտնում ու ասում.

– Բարև, մայրի՛կ, լսել եմ՝ տանդ գողություն է եղել:

– Չէ՛,– հանգիստ ասում է պառավը,– ամեն ինչ իր տեղում է:

– Ինչպե՞ս է իր տեղում, երբ հավերիցդ պակասել են,– ասում է ջրաղացպանը:

Պառավը թե՝

– Հա՛, ճիշտ է, պակասել են, բայց տանողը վերջն ի՛նքը խայտառակ կլինի. ով ինչ անի՝ իրեն կանի:

– Բայց ինչի՞ ձայն չես հանում, չես բողոքում, ինչի՞ ես լռում. ախր, քեզ վնաս են հասցրել,– ասում է ջրաղացպանը:

– Ոչի՞նչ, կարևոր չէ,– պատասխանում է պառավը,– ամառը նորից հավ ու աքլոր կառնեմ, ճտեր կունենամ:

– Ախր, ինչպե՞ս ես համբերում, երբ քեզ էսքա՜ն վնաս ու նեղություն են պատճառել,– չի հանգստանում ջրաղացապանը,– գոնե

մի բան ասա, անիծի՛ր, հայհոյի՛ր՝ սիրտդ թեթևանա, հովանա:

– Ասելու կարիք չկա. իմ սիրտն առանց ասելու էլ հանգիստ ու խաղաղ է,– ասում է պառավը:

Օրը կամաց-կամաց մթնում է, բայց ջրաղացպանը պառավից ձեռ չի քաշում, մի գլուխ խնդրում, աղաչում, պաղատում է, որ հավի գողին նախատի, անիծի, հայհոյի:

Խեղճ պառավը տեսնում է՝ էլ ճար չկա, ջրաղացպանից պրծում չունի, համբերությունից դուրս է գալիս, զայրանում, չալիկը խփում է գետնին, ասում.

– Ինչ ես տիզի պես կպել, պոկ չես գալիս: Դժբախտ մարդ է իմ հավերը տանողը, դու էլ նրա օրն ընկնես:

Պառավի խոսքերի վրա ջրաղացպանն ուրախությունից տեղում պար է գալիս.

– Ի՜նչ լավ եղավ, ի՜նչ լավ եղավ. մեղք գործեցի ու պատժվեցի:

Տուն է գալիս, տեսնում՝ կնոջ երեսի ու մարմնի փետուրները թափվել են, մաքրվել: Ուրախությունից ինչ ձեռքն ընկնում է՝ էլ յուղ, էլ միս, էլ տեսակ-տեսակ կերակուրներ, տանում, պառավին է տալիս:

Ասում են՝ այդ օրվանից ջրաղացպանի կինը էլ չէր համարձակվում ուրիշի ունեցվածքի վրա աչք տնկել. անգամ հավի ընկած փետուրին մոտ չէր գալիս, ո՛ւր մնաց՝ հավին:

Երեք ոսկե աղյուս

Պատմում են, որ մի գյուղում երեք անբաժան ընկեր են ապրել: Նրանց տները կողք կողքի էին, ընկերներն առավոտից երեկո միասին էին անցկացնում ժամանակը՝ միասին ուտում-խմում էին, միասին ուրախանում ու քեֆ էին անում: Մի անգամ նրանք գնացին հեռավոր մի վայր՝ եղջերու որսալու: Տնից դուրս եկան վաղ առավոտյան, և երբ կեսօրվա արևն սկսեց այրել, հասան մի մեծ ծառի, տեղավորվեցին նրա ստվերում, որպեսզի ճաշեն ու մի քիչ հանգստանան: Ծառի զով ստվերում երեք անբաժան ընկերների խաղաղ զրույցն ասես հոսում էր հանդարտասահ գետի պես: Հանկարծ ընկերներից մեկը նկատեց, որ ծառի փչակում ինչ-որ բան է շողշողում: Նա այդ մասին ասաց մյուսներին: Վեր թռան, մոտեցան փչակին և այնտեղ տեսան երեք փայլուն աղյուս: Ընկերներից ամենամեծն ու փորձառուն ասաց.

– Աստված վկա, այս աղյուսները ոսկուց են:

Մյուս երկուսը սկզբում չհավատացին, բայց երբ ավելի ուշադիր նայեցին, համոզվեցին: Նրանք անչափ ուրախացան.

– Ճի՛շտ է, ճի՛շտ է, ոսկե աղյուսներ են: Ի՜նչ բախտ է, որ Աստված մեզ այստեղ առաջնորդեց:

– Հանկարծ ընկերներից մեկը գոռաց.

– Զգուշացե՛ք, նայեք՝ ի՜նչ սարսափելի է…

Պարզվեց, որ մի հսկայական կոբրա հսկում է անսպասելի հայտնաբերած գանձը: Բայց գանձին տիրելու ցանկությունն այնքան մեծ էր, որ ընկերները հաղթահարեցին վախը, սպանեցին կոբրային, փչակից հանեցին երեք ոսկե աղյուսները և որոշեցին հավասար բաժանել միմյանց միջև: Յուրաքանչյուրին մեկ աղյուս հասավ: Ընկերներն այդ ամբողջ իրարանցումից, անսպասելի լարվածությունից և ուրախությունից հետո հանկարծ զգացին, որ շատ քաղցած են: Որոշեցին, որ իրենցից մեկը գնա մոտակա գյուղը՝ ուտելիք բերելու: Կուտեն, նոր կմտածեն որսի մասին: Ընկերներից ամենափոքրը ճանապարհ ընկավ դեպի մոտիկ գյուղը: Ճանապարհին, ինքն էլ չիմացավ, թե ինչու, սկսեց մտածել այն մասին, որ վատ չէր լինի, եթե ամբողջ ոսկին միայն իրենը լիներ: Գյուղ հասնելով՝ նա ճաշեց, իսկ ընկերների բաժնի մեջ թույն լցրեց: «Թող մեռնեն,– մտածեց նա,– երեք ոսկե աղյուսներն էլ ինձ կմնան»:

– Այդ նույն ժամանակ մյուս երկու ընկերն էլ նույնն էին մտածում՝ ինչպես ազատվել երրորդից: Որոշեցին, որ հենց ուտելիքը տեղ հասցնի, կսպանեն նրան, իսկ նրա աղյուսը կբաժանեն երկու մասի: Քիչ անց կրտսեր ընկերը տեղ հասավ և ասաց.

– Ես այնպես քաղցած էի, որ չհամբերեցի և գյուղում ճաշեցի: Սա էլ՝ ձեր բաժինը:

Նա հազիվ էր խոսքն ավարտել, երբ մյուս երկուսը հարձակվեցին վրան և դաժանորեն այնքան ծեծեցին, մինչև շունչը փչեց: Փոս փորեցին, թաղեցին, որպեսզի հետքերը թաքցնեն, իսկ իրենք իրենցից գոհ նստեցին ուտելու: Մեծ ախորժակով կերան եղածն ու… փռվեցին գետնին: Մահվանից առաջ նրանք էլ շատ տանջվե-

ցին, ինչպես իրենց երրորդ ընկերը: Իսկ ոսկե աղյուսներն ընկած էին և շողշողում էին արևի տակ: Եվ չկար մեկը, որ ասեր.

– Այս ոսկին իմն է:

Ագահությունը հոգու ամենամեծ արատներից մեկն է: Աչքածակությունը կործանեց երեք մարդկանց, ովքեր մի ժամանակ սրտակից ընկերներ էին:

Երեք ախպեր

Երեք ախպեր են լինում: Մեծի անունը Յեալ է լինում, միջնեկինը՝ Դուալ, փոքրինը՝ Սուալ: Նրանք լեռնային մի հեռավոր գյուղում էին ապրում: Մի օր էլ որոշում են Գիլանի դաշտավայր իջնել, բրինձ առնել: Յեալը իր ձին է նստում, Դուալը՝ իր ջորին, Սուալն էլ՝ իր էշը:

Գնո՛ւմ են, գնում, բրնձի դաշտերին են հասնում: Հոգնած ու ջարդված էշը խրվում է դաշտերի ցեխ ու տլի մեջ, մնում: Սուալը իջնում, բայց ինչ անում է, չի կարողանում էշը ցեխից հանել: Յեալն ու Դուալը հենց տեսնում են իրենց ախպերը ուշանում է, հետ են դառնում: Դառնում են, տեսնում՝ Սուալի էշը թաղվել է ցեխի մեջ: Իջնում են. մեկը էշի գլխից է բռնում, մյուսը՝ պոչից: Ինչքան զոռում են, զոռում, էշը տեղից չի շարժվում: Ճարահատ էշից ձեռ են քաշում:

Սուալը ճանապարհի կեսը Յեալի ձիով է գնում, մյուս կեսը՝ Դուալի ջորով, մինչև հասնում են Գիլան, մտնում իրենց ծանոթի տուն: Տանտերը էշի փալանը տեսնում է թե չէ, հարցնում է.

– Բա էշն ուր է:

Ախպերներն իրենց գլխովն անցածը պատմում են: Տանտիրոջ դուրը գալիս են համերաշխ ախպերները ու գիշերն իր տանը հյուր է պահում: Ընթրիքին տանտիրուհին երեք ման փլավ է դնում նրանց առաջ՝ երկուսը՝ մեծ ամանով, մեկը՝ փոքր: Յեալը Դուալի երեսին է նայում, Դուալը՝ Սուալի: Սուալը մեծ ամաններից մեկը դնում է Յեալի դեմը, մյուսը՝ Դուալի, ինքն էլ փոքրն է վերցնում: Քանի որ ամանը փոքր է լինում, Սուալը շուտ ուտում, պրծնում է: Յեալը իր փլավից երեք բուռ տալիս է ախպորը, Դուալը՝ իր բաժին փլավից, միասին ուտում, վերջացնում են:

Տանտերն այդ տեսնելով՝ ախպերներին գովում է ու հրամայում, որ միրգ բերեն հյուրերի համար: Տանտիրուհին երկու հատ խոշոր ու հյութալի տանձ է բերում, դնում սեղանի մեջտեղը: Յեալը Դուալի երեսին է նայում, Դուալը՝ Սուալի: Սուալը տանձերը վեց հավասար մասի է բաժանում. երկուսը Յեալին է տալիս, երկուսը՝ Դուալին, մնացած երկուսն էլ ինքն է ուտում: Տանտերը ավելի ու ավելի շատ է սիրում հալալ-կաթնակեր ախպերներին:

Մթնում է, բոլորը պառկում են, քնում:

Առավոտյան արթնանում են: Տանտերը բրնձի պարկերից մեկը դնում է Յեալի ձիու վրա, մեկը՝ Դուալի ջորու: Հետո դառնում է Սուալին, հարցնում.

– Բա քո բաժին բրինձն ինչ անեմ:

Յեալն ասում է.

– Ճամփի կեսը ես իմ ձիով կտանեմ:

Դուալն ասում է.

– Մյուս կեսն էլ ես իմ ջորով կտանեմ:

Տանտերն այդ էլ որ տեսնում է, անչափ ուրախանում է:

– Քանի որ դուք սիրով ախպերներ եք,– ասում է,– ես բրնձի փողը չեմ վերցնի: Գնացեք, հալալ լինի ձեզ:

Երեք ախպեր մնաս բարով են անում, գալիս, անփորձանք տուն հասնում:

Մեղավոր ավանակը

Մի անգամ առյուծը, ընձառյուծը, բորենին և ավանակը հավաքվում են խորհրդակցելու, թե ինչո՞ւ են իրենց գործերն այդպես անհաջող: Վաղուց արդեն անձրև չէր գալիս, և կեր հայթայթելն անչափ դժվարացել էր:

– Ինչ է պատահել,– նրանք հարցնում էին իրար:

– Մեզնից մեկնումեկն անպայման մեծ մեղք է գործել, թե չէ Աստված մեր գլխին այսպիսի դժբախտություն չէր թափի,– ասում է հավաքվածներից մեկը:

– Մենք պետք է խոստովանենք մեր մեղքերը և քավենք,– առաջարկում է մյուսը:

Այդպես էլ որոշում են: Առաջինն առյուծն է իր մեղքը խոստովանում.

– Օ՜, ես ահավոր մեղք եմ գործել: Մի անգամ գյուղի մոտ մի ցլիկ տեսա, քարշ տվի անտառ ու կերա:

Մյուս գազանները նայում են առյուծին, որի ուժից բոլորը վախենում էին, և գլուխները տարուբերում:

– Ո՛չ, ո՛չ,– առարկում են նրանք առյուծին, դա բոլորովին էլ մեղք չէ:

Ապա խոսում է ընձառյուծը.

– Օ՜, ես սոսկալի մեղք եմ գործել: Երբ բացատում թափառում էի, այնտեղ տեսա հոտից հետ մնացած մի այծ, բռնեցի ու կերա:

Մյուս գազանները նայում են ընձառյուծին, որի որսորդական շնորհքը լավ հայտնի էր նրանց, և առարկում են.

– Է՛, մի՞թե դա մեղք է:

Ընձառյուծից հետո խոստովանության հերթը բորենունն էր.

– Օ՜, ես շատ մեղավոր եմ: Մի անգամ մտա գյուղ, մի հավի ճուտ գողացա ու կերա:

– Ո՛չ,– առարկում են գազանները,– դա էլ մեղք չէ:

Վերջին խոսողն ավանակն էր.

– Մի անգամ, երբ իմ տերն ինձ հեծած, ճանապարհով քշում էր, հանդիպեց իր ծանոթին, կանգնեցրեց և սկսեց նրա հետ զրուցել: Ես այդ ժամանակ ճանապարհից դուրս եկա և մի քիչ արածեցի:

Առյուծը, ընձառյուծը և բորենին նայում են ավանակին, որից նրանցից ոչ մեկը ո՛չ վախենում էր, ո՛չ էլ քաշվում: Մի պահ լռում են, ապա երեքն էլ կշտամբանքով իրենց գլուխները տարուբերում են ու ասում.

– Այո՛, դա իսկական մեղք է: Դա սարսափելի մեղք է: Ավանա՛կ, հենց քո պատճառով է, որ մեր գլխին այդպիսի արհավիրք է թափվել:

Առյուծը, ընձառյուծն ու բորենին այդպես են ասում, ապա նետվում ավանակի վրա և հոշոտում:

Որքան կարող ես քեզնից ուժեղներից հեռու մնա, թե չէ նրանք միշտ էլ պատրվակ կգտնեն քեզ ոչնչացնելու:

Ալիբեկ Կաշկաշին

Կահիրե քաղաքում՝ Եգիպտոսի սրտի մեջ, ապրում էր մի ծերունի, որի անունը Ալիբեգ Կաշկաշի էր: Նա կաղում էր ձախ ոտքից և քաղաքի փողոցներով անցնում էր կարծես պարելով: Քաղաքի երեխաներին դա ծիծաղելի էր թվում: Նրանք դեռ հեռվից տեսնելով ծերունուն՝ իրենք էլ էին սկսում պարել ու ճղճղալով երգել՝

Ալիբեկ Կաշկաշի,
Դե թռի, ոտք քաշի:

Երբ նա մոտենում էր նրանց, չարաճճիները ավելի բարձր էին գոռում.

Դե թռի, ոտք քաշի:
Դե թռի, ոտք քաշի:

Ուր էլ որ գնում էր ծերունին, այդ անիծվածները հետևում էին նրան, ու նա միշտ միևնույն բանն էր լսում՝

Դե թռի, ոտք քաշի:
Դե թռի, ոտք քաշի:

Վերջապես Ալիբեգն այլևս այդ տանել չի կարողանում: Նա ճանապարհից մի քար է վերցնում ու շպրտում չարաճճիների վրա: Քարը կպչում է տղաներից մեկի գլխին, և նրա ճակատին մի մեծ ուռուցք է առաջանում: Չարաճճին վազում է հոր մոտ, բարձրաձայն լաց է լինում ու գանգատվում չար Ալիբեգից: Զայրացած հայրը դուրս է թռչում, բռնում Ալիբեգի թևից ու տանում դատավորի մոտ,

- Սա չար Ալիբեգն է,- ասում է նա,- քար է շպրտել իմ սիրելի որդու գլխին և մի մեծ ուռուցք առաջացրել նրա ճակատին: Դատիր նրան:

Խիստ դատավորը հարցնում է Ալիբեգին.

- Չար մարդ, ինչպե՞ս ես դու համարձակվել նեղացնել երեխային: Ես քեզ կպատժեմ օրենքով:

Պատասխանի փոխարեն Ալիբեգը, ծիծաղելի դեմք ընդունելով, ճիշտ այնպես, ինչպես երեխաներն էին այդ անում, երգեցիկ ձայնով բղավում է.

Այո՛, այո՛, դու ինձ պատժիր,
Մարդկանց ծիծաղը շարժիր:

- Իհարկե ես քեզ պատժելու եմ, բացականչում է դատավորը: Այդ ժամանակ Ալիբեգն ավելի բարձրաձայն է սկսում երգել.

Պատժիր, իհարկե, պատժիր,
Մարդկանց ծիծաղը շարժիր:

Ծամածռում է դեմքը, պարում դատավորի առաջ և շարունակում է երգել.

Պատժիր, իհարկե, պատժիր,
Մարդկանց ծիծաղը շարժիր:

- Լռելո՞ւ ես, թե չէ, անխելք ծերունի,- գոռում է դատավորը, և դեմքը կարմրում է զայրույթից:

- Պատժիր, իհարկե, ծիծաղ շարժիր,- դատավորին չլսելով՝ շարունակում է Ալիբեգը: Գազազած դատավորը նշան է անում պահակներին, և զինվորները բռնում են Ալիբեգին: Այդ ժամանակ Ալիբեգը ծիծաղելով ասում է դատավորին.

- Օ՛, արդարներից դու արդար, դու քեզնից դուրս ես եկել, և քո դեմքը կատաղությունից կարմրել է: Բայց ես այդ հիմար երգը չորս անգամ միայն երգեցի: Պատկերացրու, թե ի՞նչ էի լինում ես, երբ չար տղաները ամեն օր վազում էին իմ ետևից և ծաղրում իմ անունը:

Այդ ժամանակ դատավորը հասկանում է, որ Ալիբեգը մեղք չունի, և ասում է տղայի հորը՝

- Այս պատվարժան մարդը ուռուցքով զարդարել է քո տղայի ճակատը: Գնա տուն, վերցրու ճիպոտը և զարդարիր չարաճճիին հակառակ կողմից:

Այսպես է ասում դատավորը և արձակում Ալիբեգին:

Այդ օրվանից երեխաները այլևս չէին ծաղրում կաղ ծերունուն: Հանդիպելուց նրանք գլուխ էին խոնարհում և բարի ողջունում.

- Բարև, Ալիբեգ Կաշկաշի պապիկ:

Խրատ թագավորներին

Շատ դարեր առաջ Բենարեսում իշխում էր Բրահմադաթա արքան: Նա արդար տիրակալ էր, և ժողովուրդը սիրում էր նրան: Բայց նա շատ էր ուզում, որ մեկնումեկն իր մասին ասի ողջ ճշմարտությունը:

Եվ նա այդ մեկին նախ փնտրում է արքունիքում, բայց ոչ ոք նրա մասին վատ բան չի ասում: Արքան ստիպված դուրս է գալիս պալատից, որպեսզի փնտրի իր հարցի պատասխանը: Հարց ու փորձ անելով ամեն պատահողի՝ հասնում է քաղաքի ծայրամասը: Բայց դարձյալ ոչ մեկը նրա մասին վատ բան չի ասում: Բրահմադաթան շատ է վշտանում, որովհետև գիտեր, թե ինչու են մարդիկ սովորաբար փառաբանում իրենց թագավորին:

Նա որոշում է քաղաքից դուրս փնտրել ճշմարտությունն ասողին: Եվ հրամայում է խորհրդականներին՝ իր փոխարեն կառավարել երկիրը, իսկ ինքը կառք է նստում ու ծպտված հեռանում քաղաքից: Բայց ուր էլ գնում է, թագավորին փառաբանող մարդկանց է հանդիպում:

Այնպես է պատահում, որ նույն այդ ժամանակ Քոզալայի Մոլիք արքան նույնպես փնտրում էր մեկին, որն իր մասին կասեր ճշմարտությունը: Բենարես վերադառնալու ճանապարհին Բրահմադաթան հանդիպում է դիմացից եկող Մոլիքին: Իսկ ճանապարհը նեղ էր. երկու կառք կողք կողքի անցնել չէին կարողանա:

– Մոլիք արքայի կառապանն ասում է Բրահմադաթա արքայի կառապանին.

– Կառքդ մի կողմ քաշի՛ր՝ անցնենք:

– Իսկ մյուսը պատասխանում է.

– Քոնը մի կողմ քաշիր: Իմ կառքում Բենարեսի արքան է՝ մեծն Բրահմադաթան:

– Իսկ իմ կառքում Քոզալայի արքան է՝ մեծն Մոլիքը: Դու պետք է զիջես ճանապարհը, ասում է Մոլիքի կառապանը:

«Մենք երկուսս էլ թագավոր ենք, մտածում է Բրահմադաթան: Ո՞վ պետք է ճանապարհը զիջի: Հարկավոր է պարզել. եթե նա ինձանից երիտասարդ է, ուրեմն պարտավոր է զիջել ճանապարհը»:

Բայց պարզվում է, որ երկու թագավորներն էլ նույն տարիքի են: Հետո նրանք խոսում են իրենց բանակների և թագավորությունների, իրենց ծագման և ընտանիքների մասին: Ու դարձյալ պարզվում է, որ ոչ մեկն էլ մյուսից առավելություն չունի:

– Այդ ժամանակ Բրահմադաթան հարցնում է Մոլիքի կառապանին.

– Քո արքան իմաստո՞ւն է:

Կառապանը պատասխանում է.

– Փոթորկին նա ուժով է հաղթում,
Հեզությանը՝ հեզությամբ,
Բարությանը՝ բարությամբ,
Չարությանը՝ չարությամբ:
Այսպիսին է Մոլիք արքան:

Բրահմադաթայի կառապանի հերթն էր պատասխանելու.

– Բարկությանը նա հաղթում է համբերությամբ,
Չարությանը՝ բարությամբ,
Ժլատությանը հաղթում է ընծաներով,
Ճշմարտությամբ է պատասխանում ստախոսին:
Այսպիսին է Բրահմադաթան:
– Լսելով այդ՝ Մոլիք արքան ու նրա կառապանը իջնում են կառքից և ճանապարհ տալիս Բրահմադաթա արքային:

Ծերունիների իմաստությունը

Մի դաժան արքա բոլոր ծեր մարդկանց կոտորելու հրաման արձակեց:

– Ինչ օգուտ նրանցից, ասաց թագավորը, ոչ հերկել են կարողանում, ոչ հնձել, ոչ ցախ կոտրատել: Զուր տեղը հաց են ուտում, տանը՝ ոտքի տակ ընկնում: Առանց նրանց ապրելն ավելի լավ կլինի:

Թագավորի դահիճները գործի անցան, բոլոր ծերերին կոտորեցին: Միայն մեկ ծերունի մնաց՝ մի իշխանի հայր: Իշխանը խղճաց իր ծեր հորը, թաքցրեց և սկսեց նրան թաքուն կերակրել:

Դաժան արքան մի կամակոր սև նժույգ ուներ, որն աքացի էր տալիս, խրտնում էր, կանգնում հետևի ոտքերին, հեծյալներին տապալում գետնին: Ոչ ոք չէր կարողանում հեծնել նժույգին: Արքան իմացավ, որ մայրաքաղաքում մի իմաստուն հեքիմ կին է ապրում: Հրամայեց պալատ բերել նրան և սկսեց հարցուփորձ անել, թե ինչպես կարելի է աշխույժ նժույգը սանձել:

– Արքա՛, ասաց կինը, հրամայիր քո իշխաններին, որ ավազից

պարան հյուսեն և այդ պարանով ձիու երեք ոտքերը կապ գցեն: Նժույգդ գառան պես հնազանդ կդառնա:

Թագավորը ծոծրակը քորեց և կանչեց իշխաններին:

– Հե՛յ, իշխաններ, գոռաց նա, լսե՛ք իմ հրամանը. վաղն առավոտյան ավազից հյուսված պարանն իմ ձեռքում պիտի լինի: Եթե առանց պարանի գաք պալատ, ձեր գլուխներն իրենց տեղերում չեն մնա:

Իշխանները գլխահակ ցրվեցին. մի՞թե հնարավոր էր արքայի այդ հրամանը կատարել: Այն իշխանը, որը խնայել էր հոր կյանքը, նույնպես նրանց մեջ էր: Տուն եկավ մտախոհ, տխուր: Եվ հայրը հարցրեց նրան.

– Ինչո՞ւ ես այդպես մռայլ, որդի՛ս:

Իշխանը հայտնեց արքայի հրամանը:

– Վիշտդ հեշտ է դարմանել, տղա՛ս, ասաց ծերունին: Վաղն առավոտյան, երբ գնաս պալատ, ու թագավորը հարցնի՝ ո՞ւր է պարանը, դու նրան այսպես պատասխանիր.

– Թագավորն ապրած կենա, մենք պատրաստ ենք ավազից պարան հյուսել, բայց չգիտենք, թե ինչպիսին պետք է լինի այն՝ հա՞ստ, թե՞ բարակ, դեղի՞ն, թե՞ կարմիր: Նմուշը մեզ ցույց տուր:

Հաջորդ օրը, այդքան խելացի պատասխան լսելով, թագավորը գլուխը կախեց և ասաց.

– Դուք իրավացի եք, ես պետք է ձեզ նմուշը տամ, բայց դա չեմ կարողանա անել:

Եվ արքան խնայեց իր իշխանների կյանքը:

Նույն տարվա ամռանը երկրում երաշտ սկսվեց: Կիզիչ արևի ճառագայթներն այրեցին ամեն ինչ՝ և խոտը, և ցորենը, և պտուղները: Ցամաքեցին գետերն ու ջրերը, ամբարները դատարկվեցին. ոչ մի հատիկ ցորեն չմնաց: Մարդիկ սարսափահար էին, բոլորին սպառնում էր սովամահությունը: Թագավորը մտքերի մեջ ընկավ, կանչեց իշխաններին և հրամայեց.

– Ինչ ուզում եք՝ արեք, բայց եթե վաղն առավոտյան ինձ չասեք, թե ցանքի համար որտեղից ցորեն ճարենք, ձեր գլուխները ձեր ուսերին չեն մնա:

Վշտացած իշխանները գնացին: Շատ դժվար էր ցորեն ճարելը: Ծեր հայրը տեսավ, որ որդին արքայի մոտից դարձյալ սև ամպից էլ սևակնած է վերադարձել, հարցրեց.

– Ի՞նչ է պատահել, որդի՛ս:

– Այս անգամ, հայրի՛կ, դու էլ չես կարողանա ինձ օգնել, պատասխանեց իշխանը:

– Ինչո՞ւ:

– Որովհետև թագավորին ցանքի համար ցորեն է պետք, իսկ ողջ երկրում ցորեն չկա:

– Մի՛ անհանգստացիր, տղա՛ս, ասաց ծերուկը: Երբ վաղը թագավորի մոտ գնաս, խորհուրդ տուր, որ նա հրամայի գյուղացիներին՝ քանդել բոլոր մրջնանոցները: Դրանց մեջ ցորեն շատ կա. մրջյունները հատիկ-հատիկ հավաքել են:

Այդպես էլ արվեց: Գյուղացիները դաշտ դուրս եկան, փորփրեցին բոլոր մրջնաբները և յուրաքանչյուրում մի քսակ ընտիր ցորեն գտան: Խնդրի այս լուծումը շատ զարմացրեց թագավորին:

– Ասա՛ ինձ, այդ իմաստուն խորհուրդն ո՞վ տվեց քեզ, հարցրեց նա այն իշխանին, որը խնայել էր հոր կյանքը:

– Չեմ համարձակվում ասել, արքա, որովհետև ինձ կկործանես, գլուխը խոնարհեց իշխանը:

– Խոստանում եմ, որ գլխիցդ մազ անգամ չի պակասի:

Իշխանը խոստովանեց, որ ժամանակին թաքցրել է հորը, և որ հենց հայրն է իրեն սովորեցրել թե՛ ավազե պարանի համար տրված պատասխանը, թե՛ ցորենի ճարն անելը:

– Այդ ժամանակ նոր օրենք դուրս եկավ. արգելվում էր ծերերին վիրավորելը, իսկ հանդիպելիս յուրաքանչյուրը պարտավոր էր նրանց զիջել ճանապարհը:

Փղի հյուր նապաստակը

Փիղը որոշում է խնջույք կազմակերպել: Գարեջուր է եփում, կանչում կենդանիներին և ասում.

– Այս գարեջուրը ես պետք է հյուրասիրեմ միայն եղջյուրավորներին, իսկ անկոտոշները թող հեռու մնան:

Բոլոր կենդանիները վախենում էին փղից, հնազանդվում էին նրան, իսկ նապաստակը մտածում է.

– Լավ գարեջուր ունի առաջնորդը, ինչպե՞ս անեմ, որ համը տեսնեմ:

Եվ որոշում է խաբել փղին: Թաքնվում է թփերի մեջ ու սպասում ջահել եղջերուին: Երբ սա անցնում էր թփերի կողքով, նապաստակը թռչում է նրա մեջքին, իսկույն կտրում եղջյուրները և սոսնձով կպցնում իր գլխին:

Եվ նապաստակը համարձակ ճանապարհվում է փղի մոտ՝ հյուրասիրության:

Երբ փիղը տեսնում է նապաստակին, զարմանում է և ասում.

– Ամենալավ եղջյուրները նապաստակինն են: Հարգանք ու պատիվ նրան, թող նա լցնի գարեջուրը:

Մյուս կենդանիները նույնպես սկսում են գովաբանել նապաստակի եղջյուրները: Նապաստակն սկսում է լցնել գարեջուրը և, ագահություն անելով, իր բաժակում՝ բոլորից շատ:

Այնքան շատ գարեջուր է խմում այդ եղջյուրավոր նապաստակը, որ հարբում է:

Այդ ժամանակ հանկարծ փղի մոտ հյուրասիրության է գալիս ծեր եղջերուն:

Նապաստակը հարցնում է նրան.

– Ինչո՞ւ ես այդպես ուշ գալիս, մի՞թե դու անկոտոշ ես:

– Ես եկել եմ տեսնելու, թե ինչպես ես դու գարեջուր խմում,– պատասխանում է ծեր եղջերուն ու նստում մի կողմում:

Հետո կամացուկ թեքվում է և նապաստակի ականջին շշուկով ասում.

– Ինչ որ սոսնձով է կպչում, պոկվում է:

Հյուրերը տեսնում են, որ եղջերուն ինչ-որ բան ասաց, հարցնում են նապաստակին, թե ինչ շշնջաց եղջերուն:

Նապաստակը ծիծաղում է ու ասում.

– Մի՞թե արժե դրան ուշադրություն դարձնել: Ծեր եղջերուն այնքան է կերել խնջույքում, որ դատարկ բաներ է դուրս տալիս:

Լսելով այս խոսքը՝ ծեր եղջերուն իր ասածը կրկնում է բարձրաձայն.

– Ինչ որ սոսնձով է կպչում, պոկվում է:

Նապաստակը տեսնում է, որ բոլորն իրեն են նայում, վախենում, դողդողում է, որի հետևանքով եղջյուրները պոկվում ու ընկնում են գետին:

Նապաստակը վեր է թռչում ու, որքան ուժ կար ոտքերում, փախչում:

Կարմրատամ Այինը

Կալիգանը մի ագահ ու կոպիտ մանչուկ էր: Նա ոչ ոքի չէր սիրում. միայն ինքն էր, որ կար: Տանը նստած մնալը նրան ձանձրացնում է և որոշում է թողնել գնալ՝ ուր աչքը կտրի: Եվ Կալիգանի մայրը՝ պառավ այրի Մերի Աննան, ասում է նրան.

– Վերցրու շերեփն ու ջրհորից ջուր բեր, ճանապարհի համար կարկանդակ պիտի թխեմ: Տե՛ս, հա՛, ջուրը չթափթփես:

Կալիգանը շերեփը վերցնում, գնում է ջրհորից մի կերպ ջուր հանում ու, մինչև հետ գալը, գրեթե ամբողջ ջուրը թափում է: Մի քիչ է ջուր մնում, այն էլ՝ շերեփի հատակին:

Ու Մերի Աննան նրան ասում է.

– Ախր քիչ ջուր ես բերել, կարկանդակը փոքր կլինի, որ շատ բերեիր, կարկանդակն էլ մեծ դուրս կգար:

Եվ ճիշտ որ՝ կարկանդակը հազիվ մի պատառ դուրս եկավ:

Ու Մերի Աննան ասում է Կալիգանին.

– Որդի՛ս, ամբողջ օրը բան չեմ կերել, քո կարկանդակից մի կտոր տուր ինձ:

– Չէ՞ մի,– պատասխանում է Կալիգանը,– ինձ հազիվ հերիքի:

Եվ կարկանդակը խոթում է մաղախը:

– Որ այդպես է, չքվի՛ր աչքիցս,– գոչում է Մերի Աննան:– Դու որ ինձ կարկանդակ չտվեցիր, ես էլ քեզ իմ մայրական օրհնանքը չեմ տա:

– Պե՛տքս էլ չէ,– ասում է Կալիգանը,– դրա համար լաց չեմ լինի: Ինչիս է պետք քո օրհնանքը, առանց դրա էլ յոլա կգնամ:

Ու մի երգ երգելով ճանապարհ է ընկնում անհոգ: Դաշտերով ու անտառներով գնալիս տեսնում է՝ ճանապարհի մոտ ոչխարներ են արածում: Ու հենց այդտեղ էլ՝ մի բլրակի լանջին նստել է ծեր, շատ ծեր մի հովիվ:

Կալիգանը մոտենում է հովվին ու հարցնում.

– Ո՞ւմն են այս ոչխարները, ո՞վ է սրանց տերը, մշակ չի՞ ուզում:

Հովիվը նայում է նրան և, պատասխանելու փոխարեն, քթի մեջ ֆսֆսացնում.

– *Իմ տերն է Ինը,*
Կարմրատամ Ինը:
Գողացել է դուստրերին
Հինգ թագավորների:
Չի կերակրում օրերով,
Եվ ծեծում է ձողերով.
Ձողերը ոսկուց են շինված
Ու մետաքսով են պատած:

– Էհե՛,– մտածում է ինքն իրեն Կալիգանը,– ինձ այդպիսի տեր պետք չէ:– Ու շարունակում է ճամփան: Գնում է մի օր, երկու օր ու տեսնում է խոզերի մի հսկայական բոլուկ, իսկ բլրակի լանջին էլ նստած է խոզարածը: Կալիգանը հարցնում է խոզարածին.

– Ասա՛, պապի՛, ո՞վ է քո տերը, մշակ պետք չէ՞ նրան:

Խոզարածը շատ էր ծեր: Երկար ժամանակ լուռ ինչ-որ բան էր մտածում: Վերջապես ցածր ձայնով քթի տակ փնթփնթում է.

– Իմ տերն է Աինը,
Կարմրատամ Աինը:
Գողացել է դուստրերին
Հինգ թագավորների:
Չի կերակրում օրերով,
Եվ ծեծում է ձողերով.
Ձողերը ոսկուց են շինված
Ու մետաքսով են պատած:

«Դարձյալ Աինը,– մտածում է զարմացած Կալիգանը:– Ո՛չ, պետք չէ ինձ այդպիսի տերը: Լավ կլինի, որ շուտ թողնեմ հեռանամ այս տեղերից»:

Եվ նա արագացնում է քայլերը: Երեկոյան դեմ կովերի մի նախիր է տեսնում, իսկ մոտակայքում, կանաչի վրա նստած երկար, ալեհեր մորուքով նախրապանին:

– Այս ո՞ւմ կովերն են,– հարցնում է Կալիգանը,– քո տիրոջը մշակ պետք չէ՞:

Նախրապանը հազիվ լսելի ձայնով երգում է նրա համար նույն երգը կարմրատամ ավազակ Աինի մասին, որը փախցրել է դժբախտ աղջիկներին և սովամահ է անում ու տանջում նրանց:

– Ձանձրացա Աինի մասին լսելուց,– զայրացած ասում է Կալիգանը: Ուր էլ գնում ես՝ շարունակ Աին ու Աին: Լավ կլինի՝ շուտ հեռանամ նրանից: Եվ ավելի է արագացնում քայլերը:

Բայց ծերուկը աղաղակում է նրա հետևից.

– Ինչ ես անում, անմի՛տ, ուշքի եկ, թե՞ ուզում ես կորչել ոտովգլխով: Խոզերը, կովերը և ոչխարները, որոնց դու հանդիպեցիր ճանապարհին, անմեղ, խաղաղ արարածներ են, բայց այն վայրագ գազանները, որոնց կհանդիպես դու, կպատառոտեն քեզ, ինչպես մկնիկի:

– Փչի՛ր, վախկոտ ծերուկ, փչի՛ր,– կոշտ ու կոպիտ ասում է Կալիգանն ու շարունակում ճանապարհը, կարծես թե ոչնչից տեղյակ չէ:

Դեռ հարյուր քայլ էլ չէր անցել, մեկ էլ հանկարծ ի՞նչ է տեսնում... Սարսափելի գազաններ են գալիս դեպի իրեն. ամեն մեկը երեք գլուխ ունի, ամեն գլխի վրա՝ չորս պոզ: Գալիս են, մռնչում և ուզում են ուտել իրեն:

Նա վախենում է ու փախչում, վազում է լեռներով, դաշտերով ու անտառներով և հանկարծ իր դիմաց տեսնում մի բարձր դղյակի դարպաս՝ կրնկի վրա բաց: Նա վազում, ներս է մտնում ու մեկ էլ հայտնվում է հարուստ կահավորված մի սենյակում: Սենյակում ոչ մի մարդ չկար: Վազում, մտնում է մյուս սենյակը, որտեղ նույնպես ոչ ոք չկար: Իրեն գցում է երրորդ սենյակը. սա էլ էր դատարկ: Սանդուղքով իջնում է խոհանոց: Այնտեղ տեսնում է մի կուզիկ պառավի, որ նստել էր վառարանի մոտ ու գուլպա էր գործում:

– Խնդրում եմ, չվռնդես ինձ, բարի պառավ,– ասում է նա՝ վախից դողդողալով,– թույլ տուր գիշերել պալատում:

– Լա՛վ, մնա՛, ասում է պառավը: Ոչ ոք քեզ այստեղից չի վռնդի, բայց հազիվ թե այս պալատը դուր գա քեզ: Ախր սա Կարմրատամ Աինի պալատն է, իսկ նա ոչ ոքի չի խնայում, լափում է թե՛ կանանց, թե՛ ծերունիներին, թե՛ երեխաներին:

Կալիգանի ահն ավելի է սաստկանում, նետվում է դեպի դուռը, որ փախչի, բայց հիշում է այն սարսափելի երեքգլխանի հրեշներին, որոնք հետապնդում էին իրեն դաշտում, և, աղի արցունք թափելով, ասում.

– Թաքցրո՛ւ ինձ, տատի՛կ, պատսպարիր մինչև առավոտ, մինչև լուսաբաց, իսկ առավոտյան ես գաղտագողի կհեռանամ:

– Մտիր այստեղ,– ասում է կինն ու հրում, գցում նրան սանդուղքի տակ՝ մի մութ անկյուն:

Այնտեղ նա կուչ է գալիս ու շուտով քուն մտնում: Բայց, ահա, սանդուղքը ճռճռում է, ու իր գլխավերևում դանդաղ ու ծանր քայլերի ձայն է լսում: Աինն էր վերադարձել տուն. աստիճաններով բարձրանում էր ննջարան: Իսկ ինչո՞ւ կանգ առավ սանդուղքի

վրա, ինչո՞ւ է ցած իջնում: Ա՛յ, մտավ խոհանոց... Ի՞նչ է ուզում, ի՞նչ է փնտրում, ինչո՞ւ է բոլոր ծակուծուկերը ափլփում:

Եվ հանկարծ, ասես ամպրոպ, որոտում է Աինը՝ գազանի պես մռնչալով.

– Մարդու հո՞տ եմ առնում, մարդու հո՞տ: Ա՜յ թե լավ ընթրիք կունենամ...

Եվ նա ահագին թաթը մտցնում է սանդուղքի տակ ու այնտեղից դուրս քաշում Կալիգանին: Կալիգանը նայում է նրան ու լեզուն կապ է ընկնում: Վիթխարի Աինը բերանը բացում ու ատամներն է ժընգժընգացնում, իսկ Աինի ատամները կարմիր-կարմիր էին, ինչպես մարդու արյունը: Կալիգանն աղաչում է Աինին՝ խնայել իրեն: Աինը քրքջում և ասում է.

– Լա՜վ, կխնայեմ քո կյանքը, եթե դու մի հանելուկ լուծես, իսկ եթե ոչ, չնեղանա՜ս ինձանից...

Եվ նորից ժնգժնգացնում է ատամները:

– Ի՞նչ հանելուկ,– թոթովում է Կալիգանը:

– Ի՞նչն է ոսկուց ավելի թանկ և արևից ավելի գեղեցիկ:

Կալիգանը վայրկենաբար պատասխանում է.

– Քաղցր մեղրաբլիթն ամենալավ բանն է աշխարհում:

Մարդակերը հռհռում ու բացականչում է.

– Դե՜, քեզ նման հիմարի ի՞նչ խելքի բանն է դա:

Եվ Աինը կախարդական գավազանով խփում է Կալիգանին ու անմիջապես քար դարձնում:

Կալիգանը մի եղբայր ուներ, Հարոլդ անունով, նա էլ էր կոպիտ ու ագահ: Երբ նա նույնպես որոշում է ճամփորդել, մայրը նրա համար էլ է մի փոքրիկ կարկանդակ թխում: Տալիս է նրան կարկանդակն ու ասում.

– Մի պատառ կտրիր, ինձ տուր, երեկվանից ոչինչ չեմ կերել:

Տղան պատասխանում է.

– Մի փշուր էլ չեմ տա:

Եվ գնում է տնից՝ առանց նույնիսկ մոր կողմը նայելու:

Շուտով նա էլ է գերի ընկնում Կարմրատամ Աինին: Աինը նրան էլ է առաջարկում հանելուկը.

– Ինչն է ոսկուց ավելի թանկ և արևից ավելի գեղեցիկ:

Հարոլդն էլ պատասխանում է եղբոր նման.

– Մեղրաբլիթը:

Եվ Կարմրատամ Աինը ծիծաղում է և նրան քար դարձնում:

Խեղճ այրի Մերի Աննան մի տղա էլ ուներ՝ ամենակրտսերը: Նրա անունը Վալենթայն էր: Մի անգամ նա մորն ասում է.

– Շատ ուշացան եղբայրներս... Չլինի՞ դժբախտություն է պատահել նրանց: Թույլ տուր՝ գնամ գտնեմ, գուցե իմ օգնության կարիքն ունեն:

Մերի Աննան նրան ասում է:

– Մնա՛ ինձ մոտ, որդյա՛կ իմ, չէ՞ որ դու իմ ամենակրատսերն ես:

– Ո՛չ, մայրի՛կ, օրհնիր ինձ ու ճանապարհ դիր: Սիրտս վկայում է, որ նրանց ինչ-որ վատ բան է պատահել:

Այդ ժամանակ մայրն ասում է.

– Դե՛, ի՞նչ արած, գնա՛: Միայն թե նախ վերցրու այս շերեփն ու ջրհորից ջուր բեր, բայց տե՛ս, հա՛, չթափես, չթափթփես:

Տղան մի լիքը շերեփ ջուր է բերում զգուշությամբ, որպեսզի չթափթփի: Մայրը նրա համար կարկանդակ է թխում ու ասում.

– Մի փոքր կտոր տուր ինձ քո կարկանդակից, ամբողջ օրը բան չեմ կերել:

– Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, մայրի՛կ ջան, թեկուզ ամբողջ կարկանդակը, հարազատս:

Այրի Մերի Աննան գրկում է նրան ու օրհնում, բարի ճանապարհ մաղթում: Վալենթայնը գնում է եղբայրների ճանապարհով: Գնում, գնում, մեկ էլ զգում է, որ սոված է: Հանում է պայուսակից կարկանդակի կտորը և երբ ուզում էր բերանը տանել, մոտենում է մի կուզիկ ու կաղ պառավ, ձեռքը մեկնում է ու ասում.

– Մեռնո՛ւմ եմ քաղցից, մի բան տուր ուտեմ, որդի՛ս, մի կտոր կարկանդա՛կ տուր...

Վալենթայնն ինքն էլ էր քաղցած, բայց երբ նայում է խեղճ պառավի տխուր դեմքին, խղճում ու կարկանդակի կտորը տալիս է նրան:

Ու հրաշք է կատարվում: Կուզիկ պառավը դառնում է մի գեղեցկուհի, մի բարի փերի, նրա պատառոտված ցնցոտիները շքեղ հագուստներ են դառնում, ու ձեռքին հայտնվում է կախարդական մի փայտիկ:

– Վերցրու այս կախարդական փայտիկը, ասում է նա: Ես բարի ոգի եմ: Մայրդ օրհնել է քեզ և բարի ճանապարհ մաղթել, դրա համար էլ դու հաջողություն կունենաս քո բոլոր գործերի ու արկածների ժամանակ: Հենց մորդ օրհնանքն էր, որ ինձ բերեց այստեղ՝ քո ճանապարհը: Տե՛ս, հա՛, չկորցնես փայտիկը, քեզ պետք կգա շուտով:

Ու բարի ոգին ամպի նման հալվում, անէանում է, իսկ Վալենթայնը ուրախ-զվարթ շարունակում է ճանապարհը: Եվ նա էլ իր եղբայրների նման հանդիպում է երեք ծեր հովիվներին, լսում նրանց երգը չար հսկա Աինի մասին.

– Մեր տերն է Աինը,
Կարմրատամ Աինը,
Գողացել է դուստրերին
Հինգ թագավորների:
Չի կերակրում օրերով
Եվ ծեծում է ձողերով.
Ձողերն էլ ոսկուց են շինված
Ու մետաքսով են պատած:

Ու երբ հայտնվում են երեքգլխանի սարսափելի գազանները, Վալենթայնը չի վախենում: Հենց որ թափահարում է իր կախարդական փայտիկը, հրեշներն անմիջապես չքանում են: Նա

աներկյուղ մոտենում է Աինի դղյակին ու որքան ուժ ուներ, թակում դարպասը: Նրան ընդառաջ է գալիս ալեհեր, կուզիկ կինն ու վախեցած շշնջում.

– Հեռացի՛ր, շո՛ւտ, հեռացի՛ր, այստեղ արդեն ինչ-որ մարդիկ են եկել, և դժբախտություն է պատահել նրանց: Աինն անողոք ու չար է:

Քաջ Վալենթայնն ասում է.

– Ներս թող ինձ, ես ոչ ոքից չեմ վախենում: Հիմա ես ցո՛ւյց կտամ քո Աինին, թող մի ձեռքս ընկնի: Կենդանի չի պրծնի...

Պառավն ակամա ներս է թողնում տղային ու թաքցնում սանդուղքի տակ՝ մառանում:

Երեկոյան նորից է ճռճռում սանդուղքը, և Աինը նետվում է խոհանոց: Բերանն ուժգին չփչփացնում և տնով մեկ բղավում է.

– Մարդու հո՛տ եմ առնում, մարդու հո՛տ, ա՛յ թե լավ ընթրիք կունենամ, հա՛:

Ու ձեռքը կոխելով սանդուղքի տակ՝ դուրս է քաշում Վալենթայնին:

– Հապա մի գուշակիր իմ հանելուկը, այն ի՞նչն է, որ ոսկուց թանկ է, արևից՝ գեղեցիկ:

Վալենթայնն առանց երկար մտածելու պատասխանում է.

– Ոսկուց թանկ և արևից գեղեցիկ, մեղրից քաղցր և աշխարհում ամենալավ բանը սիրող մոր օրհնանքն է:

– Գուշակե՛ց,– գոչում է մարդակերն ու լաց լինում:

Նրա կարմիր ատամները ժնգժնգում էին երկյուղից: Մարդիկ վաղուց նախագուշակել էին, որ ով լուծի այդ հանելուկը, կհաղթի ու կկործանի մարդակերին: Չարագործի թևերը թուլանում են, և նա աղերսում է խնայել իրեն:

Բայց քաջ պատանին վերցնում է կացինը և մի հարվածով կտրում հսկայի գլուխը, իսկ հետո պառավից վերցնում է բանալիները, իջնում դղյակի նկուղը և ազատում այն խեղճ աղջիկներին,

որոնց տանջում ու չարչարում էր հսկան: Նրանք դուրս են գալիս բանտից, ուրախ երգերով փառաբանում իրենց ազատարարին:

Վալենթայնը ժամանակ չուներ ուրախանալու և զվարճանալու: Նա թողնում է պարող աղջիկներին կանաչ մարգագետնում ու վազում հին, բարձիթողի այգու երկու մամռոտած քարերի մոտ, որոնք ընկած էին թփերի տակ:

Քարերը սառն էին ու լպրծուն, նրանց վրայով սողում էին դոդոշներն ու մողեսները: Ոչ մի րոպե չհապաղելով՝ Վալենթայնը թափահարում է իր կախարդական փայտիկը, և քարերը, որ Վալենթայնի եղբայրներն էին, կենդանանում են, շարժվում, ցատկոտում: Եղբայրները գրկում են Վալենթայնին, սրտանց շնորհակալություն հայտնում, որ ազատեց իրենց չար կախարդանքից.

– Մենք էլ երբեք, երբեք մեր մորն ամենափոքր վիշտ անգամ չենք պատճառի: Մենք տեսնում ենք, թե ինչքան մեծ ուժ է թաքնված մայրական սիրո մեջ:

Բոլորն էլ երջանիկ էին: Պատանիներն ու աղջիկները ձեռք-ձեռքի տված, ծիծաղելով տուն են վազում դաշտերով ու անտառներով: Եվ որքան են ուրախանում նրանց բարեկամներն ու հարազատները, երբ տեսնում են, որ նրանք ողջ ու առողջ են, ազատ և ուրախ:

Բոլորը գովաբանում են կտրիճ Վալենթայնին: Պառավ Մերի Աննան մինչև իր կյանքի վերջը հպարտանում էր նրա քաջագործություններով ու շարունակ պնդում, որ վախկոտ են միայն չար մարդիկ, իսկ նրանք, ովքեր բարի են, մեծահոգի և առատաձեռն, բոլորն էլ քաջ են:

Սուլթան Մահմուդն ու Այազը

Պատմում են, որ Սուլթան Մահմուդն իր մերձավորներից ամենից շատ Այազին էր սիրում: Մյուսները նախանձով էին նրան նայում և Սուլթան Մահմուդին անընդհատ գանգատվում էին՝ ասելով. «Չենք հասկանում՝ էդ Այազն ինչո՞վ է մեզնից առավել, որ նրան մեզանից շատ ես սիրում»:

Մի անգամ էլ, որսի ժամանակ, երբ խոսակցությունը դարձյալ Այազի շուրջն է պտտվում, Սուլթան Մահմուդը նրանց պատասխանում է.

– Նա ավելի ուշիմ, ավելի խելացի, ավելի ճարպիկ է:

– Դե, մեզ համոզի՛ր,– խնդրում են նրանք:

– Հենց էսօր, պատեհ առիթով, ձեզ կապացուցեմ,– ասում է թագավորը:

Իրիկունը, երբ Սուլթան Մահմուդը օրվա որսը առաջը կիտած, ծառի տակ նստած է լինում, տեսնում է՝ հեռվից մի քարավան է անցնում: Մերձավորներից մեկին իր մոտ է կանչում ու ականջին փսփսում.

– Գնա, իմացիր՝ ովքեր են:

Մարդը ձին քշում է քարավանի ուղղությամբ: Մի քանի րոպե անց վերադառնում է ու Սուլթան Մահմուդի ականջին ասում.

– Տեր իմ, հնդիկ վաճառականներ են:

Թագավորը դարձյալ շշուկով հարցնում է.

– Ինչ են բերում:

– Չիմացա, չհարցրի,– պատասխանում է:

Սուլթան Մահմուդը մեկ ուրիշի է իր մոտ կանչում.

– Գնա, իմացիր, թե այդ քարավանի բեռն ինչ է:

Նա թռչում է ձիու թամբին ու սրընթաց քշում քարավանի կողմը: Քիչ անց վերադառնում է ու Սուլթան Մահմուդի ականջին շշնջում.

– Տեր իմ, մետաքս է:

– Որտեղից են բերում,– հարցնում է թագավորը:

– Չիմացա,– պատասխանում է,– չհարցրի:

Թագավորը հիմա էլ երրորդ պալատականին է կանչում ու ականջին ասում.

– Գնա, իմացիր, թե մետաքսը որտեղից են բերում:

Վերադառնում է, թե՝ Չինաստանից:

– Իսկ չիմացա՞ր, թե ո՞ւր են տանելու:

– Ո՛չ,– պատասխանում է,– չէիք հրամայել:

Հետո էլ մեկ ուրիշին է շշուկով ասում.

– Գնա, իմացիր, թե այդ մետաքսն ո՞ւր են տանում:

Սա էլ վերադառնում է, թե՝ Բուխարա՛:

Սուլթան Մահմուդը հարցնում է.

– Իսկ չիմացա՞ր, թե փոխարենն ինչ են բարձելու:

– Ո՛չ,– պատասխանում է:

Եվ այսպես՝ ամեն անգամ նրանք վերադառնում են՝ միայն թագավորի հարցի պատասխանն իմանալով: Սուլթան Մահմուդը վերջում կանչում է Այազին ու ականջին ասում.

– Գնա, իմացիր՝ ովքե՞ր են:

Այազը ձին հեծնում է ու քշում դեպի քարավանը: Տեսնելով, որ Այազն ուշանում է, թագավորի մերձավորներն սկսում են չարախնդալ. «Տեսա՞ր, որ նա մեզնից ծույլ է. ուշանում է»:

– Ծույլն ու ճարպիկը հետո կերևա,– ասում է Սուլթան Մահմուդը:

Թագավորի այս խոսքերի վրա Այազը վերադառնում է: Դիմելով նրան՝ Սուլթան Մահմուդը բարձրաձայն, որ բոլորը լսեն, հարցնում է.

– Այա́զ, դրանք ովքե՞ր էին:

Այազը պատասխանում է.

– Թագավորն ապրա́ծ կենա, հնդիկ վաճառականներ էին. Չինաստանից բերած մետաքսը Բուխարա էին տանում՝ վաճառելու, որպեսզի տեղը ոչխարի մորթի բարձեն՝ Խորասան տանեն, իսկ Խորասանի տաք մուշտակներն էլ՝ ցուրտ երկրներ:

– Ապրե՛ս,– գովում է Սուլթան Մահմուդը Այազին ու դառնալով մյուսներին՝ ավելացնում,– դուք գնացիք ու միայն իմ տված հարցի պատասխանն իմացաք, մինչդեռ նա մենակ շատ ավելի սպառիչ տեղեկություն բերեց, քան դուք բոլորդ՝ միասին. ահա թե ինչու եմ ես նրան ձեզնից ավելի շատ սիրում ու գնահատում:

Ոսկի բանալին

Լինում է, չի լինում՝ մի անտառում մի անտառապահ է լինում: Էս անտառապահի կինը մի աղջիկ է բերում ու ինքն էլ մեռնում: Խեղճ անտառապահը մնում է ցավի մեջ. էնտեղ օրը մինչև իրիկուն պետք է իր պաշտոնը կատարի, անտառը շրջի, պահի, պահպանի, էստեղ էլ տանը երեխան է մնում մենակ. ոչ կերակրող կա, ոչ բարուրող: Մի օր էլ գնում է անտառի խորքը, կանգնում է ու միտք անում. «Էհ, ասում է, մարդ մի անգամ մեռնի՝ պրծնի: Մի արջ կամ մի գել դուրս գա ուտի, էս երեխի ցավիցն ազատվեմ, էլ ետ չգնամ ու տեսնեմ՝ ոնց է օրեցօր հալվում, հատնում, չոր չոփ դառնում»:

Էս մտքի մեջը՝ մին էլ էն է տեսնում՝ թափանցիկ ամպի թե մշուշի մեջ մի կին է կանգնում առաջին, մի գեղեցիկ, բարձրահասակ կին, շողշողուն աստղերից պսակը գլխին: Կանգնում է ու ասում. – Լսի՛ր, Լուսմերիկն եմ ես. ես գիտեմ՝ դու ինչ ես մտածում էս որոպեին: Մի՛ հուսահատվիր, հուսահատվելը մեղք բան է: Գնա, քո

երեխին բեր, ինձ տուր, ես նրան կպահեմ ու կմեծացնեմ իր մոր նման ու վերջը մեծ բախտի կհասցնեմ:

Անտառապահը լսում է բարի ոգուն, գնում է երեխային բերում, տալիս իրեն: Երեխային առնում է բարի ոգին, թռցնում տանում իր լուսեղեն աշխարհը:

Էնտեղ, բյուրեղյա պալատներում անպակաս լիության մեջ ապրում է երեխան՝ միշտ բարի ոգիներով շրջապատված ու նրանց հետ խաղալով:

Էսպես երեխան օրեցօր լավանում է, տարեցտարի մեծանում, տասնուչորս տարին էլ որ անց է կենում, էնպես մի գեղեցիկ աղջիկ է դառնում, որ էն հուր-հրեղեն արևի նման շափաղին է տալիս: Հենց էդ ժամանակն էլ մի օր Լուսմերիկը նրան իր մոտ է կանչում, ասում է.

– Աղջիկս, ես հեռու ճանապարհ պիտի գնամ: Պիտի գնամ աշխարհքում տխուր մարդկանց մխիթարելու, լացողների արտասուքը սրբելու: Մինչև իմ վերադարձն ահա քեզ եմ տալիս իմ բնակարանի բանալիները: Ահա 13 բանալի, էս 12 բանալին որ տեսնում ես, 12 սենյակն էլ բաց կանես ու ման կգաս, կնայես, իսկ էս ոսկի բանալին 13-րդ դռանն է, էս բանալին ամուր կպահես, էն դուռը բաց չես անիլ, եթե բաց արիր, իմացիր, որ անբախտ կլինես:

Աղջիկը խոսք է տալիս, որ կպահի իրեն տված պատվերը, ու Լուսմերիկը գնում է թե չէ՝ սկսում է բաց անել ու նայել Լուսեղեն աշխարհքի ապարանքները: Օրը մի դուռն է բաց անում ու էսպես հերթով 12 դուռն էլ բաց է անում, ման գալիս, հիանում, հրճվում արարչագործության սքանչելիքներով իրեն շրջապատող բարի ոգիների հետ: Միայն մի դուռն է մնում անբացանել, էն 13-րդ դուռը, ու սաստիկ վառվում է աղջկա հետաքրքրությունը, ինչ ուզում է լինի՝ ուզում է իմանա, թե ինչ կա էնտեղ, մի անգամ մոտիցն անց է կենում, երկրորդ անգամ դիտմամբ գալիս է մոտիկանում, երրորդ անգամ դիմում է ոգիներին.

– Ինչ կա որ, ասում է, մի բան, որ Լուսմերիկը չի իմանալ, մի քիչ ծերպ անենք, նայենք, տեսնենք ինչ կա էնտեղ: Հո կրնկի վրա բաց չեմ անիլ դուռը, ոչ էլ ներս կմտնեմ, միայն մի քիչ ծերպ կանենք ու էնտեղից կծիկրակենք...

Բարի ոգիներն ասում են.

– Չէ՛, էդ մեղք է: Լուսմերիկն արգելել է: Դրանից քեզ դժբախտություն կգա:

Աղջիկը պատասխան չի տալիս, երեսանց էնպես է ցույց տալիս, թե հանգստացավ, բայց չի հանգստանում, ցանկությունը նրա սրտի մեջ կրծում է ու տանջում: Եվ ահա մի անգամ էլ՝ բարի ոգիները որ իրանից հեռանում են, ինքն իրեն ասում է. «Դե՛, հիմի հո մեն-մենակ եմ. կգնամ բաց կանեմ, կնայեմ, ո՞վ պետք է իմանա, որ ես նայել եմ»:

Ասում է, բանալին հանում: Բանալին որ մին ու մին պատրաստ ձեռին էր, կողպեքի մեջն է կոխում, իսկ երբ որ բանալին կողպեքի մեջն էր, էլ ինչ էր մնում, պտտում է, բաց անում:

Դուռը ետ է գնում, ու մի լույս զարկում է երեսին, տեսնում է մի պայծառ կրակ հուրհուրատին տալով՝ էրվում է ինքն իր մեջ...

Դու մի՛ ասիլ՝ անմահության կրակն է, որ կա, որից ծնվում են անմահ ոգիները:

Արմացած-զարմացած մտիկ է տալիս ու աչքերին չի հավատում: Մատը մոտեցնում է էն պայծառ լուսին, մատը իսկույն ոսկի է դառնում: Սարսափը բռնում է, դուռը փակում է ու ետ վազում: Բայց ինչ անում է, չի անում, ահը չի անցնում սրտիցը, սիրտը զարկում է ու զարկում կրծքի մեջ ու չի հանգստանում, ոսկին էլ ինչքան լվանում է ու քերում, մատիցը չի վեր գալիս:

Մի քիչ ժամանակից հետո Լուսմերիկը վերադառնում է իր ճանապարհորդությունից: Աղջկանը իր մոտ է կանչում ու 13 դռան բանալին էլ ետ է պահանջում: Աղջիկը բանալիների խրձակը (փունջ) որ տալիս է, Լուսմերիկը նայում է աչքերին ու հարցնում.

– 13-րդ դուռը բաց ես արե՞լ, թե՞ չէ:

– Չէ, պատասխանում է աղջիկը:

Լուսմերիկը ձեռքը դնում է նրա սրտին ու տեսնում է՝ ինչպես է հուզված տրոփում, իմանում է, որ աղջիկը իր պատվերը զանց է արել: Երկրորդ անգամ է հարցնում.

– Ճշմարի՞տ ես ասում, որ բաց չես արել:

– Չէ, նորից պատասխանում է աղջիկը:

Էստեղ Լուսմերիկը նկատում է, որ լուսի փելքից նրա մատը ոսկեզօծվել է, պարզ տեսնում է, որ աղջիկը մեղք է գործել, ու երրորդ անգամ է հարցնում.

– Ուրեմն բաց չե՞ս արել:

– Չէ՛, երրորդ անգամ ուրանում է աղջիկը:

– Դու իմ պատվերը չես կատարել ու դրա հետ միասին դեռ սուտ ես ասում, դրա համար մեզ հետ մնալու արժանի չես դու:

Ասում է թե չէ՝ աղջիկն ընկնում է մի խոր քնի մեջ: Մին էլ աչքը էն-տեղ է բաց անում, որ պառկած է գետնի վրա, մի ամայի, անբնակ տեղում: Ուզում է օգնություն կանչի՝ ձենը դուրս չի գալի: Տեղիցը վեր է թռչում, ուզում է փախչի, բայց որ կողմը վազում է, թանձր ու խիտ տատասկը ճամփեն կտրում է: Էդտեղ մի փչակ կաղնի ծառ է լինում: Մտնում է էս ծառի փչակը: Գիշերը մտնում էր մեջը քնում, ցերեկը՝ անձրևից ու քամուց պատսպարվում: Ու քանի հիշում է, թե ինչպես լավ էր էն լուսեղեն աշխարհքում, թե ինչպես էին բարի ոգիները խաղում իր հետ՝ լա՛ց է լինում, լա՛ց է լինում: Ուտելիքն էլ էն վայրենի պտուղներն ու արմատներն են լինում, ինչ որ գտնում էր իր ծառի մոտերքում: Աշունքը թափած ընկուզն ու չոր խաշամը[1] հավաքում էր իր փչակը, ձմեռը որ գալիս էր, ընկուզով կերակրվում էր ու ձնին, ցրտին վայրենի գազանի նման մտնում էր էն չոր խաշամի մեջը, տաքանում: Մի կողմից էլ հագի շորերը մաշվում են, ծվեն-ծվեն են լինում, վրիցը վեր թափում: Իսկ արևը մի քիչ ծիծաղում էր թե չէ՝ դուրս էր գալիս, ծառի տակը նստում՝ ոտից

[1] տերևը

գլուխ երկար մազերը վրեն փռված: Տարիներով էսպես ապրում է էս աշխարհքի ամեն պակասություն ու ամեն նեղություն տանելով:

Մի անգամ էլ, գարունքվա կանանչին, ծառի տերևակալած ժամանակը, էն երկրի թագավորը անտառը որսի է դուրս գալիս: Ընկնում է մի եղնիկի ետևից: Եղնիկը փախչում է, գալիս թաքչում հենց էն թփուտներում, որ շրջապատում էին էն հին ծառը: Թագավորը ձիուց ցած է գալիս, թուրը հանում ու թփերը ջարդելով՝ իրեն համար ճամփա է բաց անում: Որ թփուտն անց է կենում, դուրս է գալիս ծառի տակը, տեսնում է առաջին մի ակն ու արեգակ աղջիկ, ոտից գլուխ ծածկված ոսկի մազերով: Կանգնում է, զարմացած մտիկ է տալիս, մտիկ ու վերջապես հարցնում է.

– Էդ ո՞վ ես դու, ինչո՞ւ ես էստեղ, էս վայրի տեղը նստած:

Աղջիկը պատասխան չի տալիս, չի կարողանում բերանը բաց անի:

Թագավորը նորից հարցնում է.

– Կուզե՞ս ինձ հետ իմ ամրոցը գնանք:

Էստեղ միայն թեթև գլխով է անում:

Թագավորը ձեռիցը բռնում է, նստեցնում իր ձիուն ու տանում իր տունը: Տանում է, հրամայում, որ զարդարեն ամենալավ զգեստներով ու կատարեն, ինչ որ կհրամայի: Եվ թեև նա չէր կարում խոսել, բայց էնքան էր գեղեցիկ, որ թագավորը շատ սիրեց ու հետն ամուսնացավ: Մի տարեն վրա տղա են ունենում:

Մի անգամ, գիշերով, երբ նա մենակ պառկած է լինում իր ննջարանում, առաջը կանգնում է Լուսմերիկն ու ասում.

– Արի, ճշմարիտն ասա ու խոստովանիր, որ բաց ես արել արգելած դուռը, և ես բաց կանեմ քո փակ լեզուն: Իսկ եթե կսկսես քո արածն արդարացնել ու առաջվա նման սուտ խոսել՝ էն ժամանակ նոր ծնած երեխեդ էլ կառնեմ կտանեմ հետս:

Թագուհին կարող էր խոսել ու խոստովանել, բայց համառում է ու պատասխանում.

– Չէ՛... Ես բաց չեմ արել արգելած դուռը...

Ու Լուսմերիկը նրա գրկից առնում է երեխային ու նրա հետ միասին անհետանում:

Առավոտը, որ ոչ մի տեղ երեխային չեն գտնում, ժողովրդի մեջ տրտունջ է բարձրանում ու տարածվում, թե թագուհին մարդակեր է, նա ինքն է սպանել ու կերել իր երեխին: Թագուհին էս բոլորը լսում է, բայց չի կարողանում խոսի, իրեն արդարացնի: Թագավորն էլ, որ սաստիկ սիրում էր նրան, չի հավատում էս բամբասանքին:

Մի տարուց հետո թագուհին նորից երեխա է ծնում: Ու նորից գիշերը հայտնվում է Լուսմերիկն ու ասում.

– Խոստովանիր, որ դու ես բաց արել արգելած դուռը, ու քեզ կվերադարձնեմ քո երեխին ու փակ լեզուդ բաց կանեմ, թե չէ, եթե համառես, էդ երկրորդ երեխեդ էլ կխլեմ կտանեմ ինձ հետ:

Թագուհին էլի ասում է.

– Չէ, ես բաց չեմ արել արգելած դուռը:

Լուսմերիկը երկրորդ որդուն էլ է խլում ու անհետանում:

Առավոտը, որ հայտնվում է, թե երկրորդ երեխան էլ է անհետացել, առաջվանից ավելի բաց, համարձակ սկսում են խոսել ու տարածել, թե թագուհին ինքն է կերել իր երեխային, իսկ թագավորի մոտիկները թագավորին խորհուրդ էին տալիս դատի հանձնել իր կնոջը: Բայց թագավորը էնքան սրտալի էր սիրում իր կնոջը, որ չէր ուզում հավատալ չարախոսությանը ու հրատարակում է, թե խոսողի գլուխը կթռչի:

Մյուս տարին մի սիրուն աղջիկ է ծնում: Երրորդ անգամ է հայտնվում Լուսմերիկն ու ասում.

– Հետևի՛ր ինձ:

Թագուհու ձեռիցը բռնած տանում է լուսեղեն աշխարհը, ցույց տալիս էնտեղ նրա առաջվա երեխաներին, որոնք ծիծաղելով խաղում էին աստղերի հետ:

Թագուհին ուրախությունից չի իմանում ինչ անի: Լուսմերիկն ասում է.

– Մի՞թե քո սիրտը դեռ չի փափկել: Եթե կխոստովանես, որ դու

բաց ես արել արգելած դուռը, ետ կտամ քեզ քո երեխեքին:

Բայց թագուհին երրորդ անգամ է պատասխանում.

– Չէ՛, ես բաց չեմ արել արգելած դուռը...

Ու Լուսմերիկը խլում է նրա երրորդ երեխային ու իրեն էլ ցած ձգում երկնքից:

Առավոտը, որ էս լուրն էլ է տարածվում, թե երրորդ երեխան էլ է չքացել, ամբողջ ժողովուրդը միաբերան սկսում է գոռալ.

– Մեր թագուհին մարդակեր է... դատաստան ենք պահանջում... պատի՛ժ ենք պահանջում...

Ու թագավորն էլ չի կարողանում դիմադրել իր խորհրդականներին: Դատ են բաց անում թագուհու դեմ և, որովհետև նա ոչ կարողանում էր խոսել, ոչ էլ արդարանում էր, վճռում են բարձրացնել խարույկի վրա: Փետ են բերում կիտում, խարույկ կազմում, թագուհուն բարձրացնում խարույկին, պինդ կապում սյունին, ու չորս կողմից կրակի բոցերն սկսում են բորբոքվել ու բարձրանալ, հանկարծ էդ ժամանակ կոտրվում է նրա գոռոզությունը, սիրտը լցվում զղջումով, ու սկսում է միտք անել. «Օ՛, եթե կարողանայի մահից առաջ խոստովանել, թե ես եմ բաց արել արգելած դուռը՞...»:

Էս մտքի հետ հանկարծ լեզուն բաց է լինում ու կանչում է.

– Այո, Լուսմերիկ, ես բաց եմ արել արգելած դուռը...

Էստեղ երկնքից սկսում է մի անձրև տեղալ ու կրակը հանգցնել: Նրա առջև փայլատակում է մի լույս, հայտնվում է առաջին աստղապսակ Լուսմերիկը՝ թագուհու երկու մեծ երեխաներից ամեն մինը մի կողքին, իսկ փոքրը՝ գրկին, ու փաղաքուշ-քնքուշ ասում է.

– Ով կխոստովանի իր արած հանցանքն ու կզղջա, նա պետք է ներվի:

Ասում է, երեխաներին ետ տալիս իրեն, փակ լեզուն բաց է անում ու երջանկացնում ամբողջ կյանքում:

Հազարատոտիկն ու որդը

Մի անգամ խաղապոչիկը պատմում էր, թե ինչպես հազարատոտիկը չամուսնացավ որդի հետ, որդն էլ չամուսնացավ հազարատոտիկի հետ:

Ահա թե ինչպես եղավ այդ:

Շատ վաղուց մի հին քարի տակ ապրում էր մի գեղեցիկ հազարատոտիկ: Նա ամբողջ գավառում հայտնի էր որպես պճնամոլ և ամբողջ օրը չէր դադարում հիանալ իր փոքրիկ տոտիկներով: Բայց քանի որ նրա ոտքերը ուղիղ հազարն էին, նա սկսում էր նրանցով հիանալ արշալույսին և այդ հաճույքը վայելում էր մինչև հաջորդ օրվա արևամուտը: Եթե հարևաններից որևէ մեկը հանկարծ նրա ոտքը կոխ էր տալիս, հազարատոտիկը վիրավորանքից կծկվում էր, դառնում գնդիկ և ոչ մեկի հետ չէր ցանկանում խոսել:

Իսկ հազարատոտիկից ոչ շատ հեռու ապրում էր երկար որդը: Դա շատ աշխատասեր որդ էր: Ամբողջ օրերով փորփրում էր հողը, հողի միջով անց էր կացնում ոլորապտույտ ճանապարհներ և շատ գոհ էր իր բախտից:

Անընդհատ հողի վրա սողալուց որդի մարմինը զարմանալիորեն փայլուն էր դարձել, երկար և ճկուն:

Մի անգամ անձրևից հետո որդը դուրս է գալիս հողի տակի իր տնից, տեսնում հազարատոտիկին և տեղնուտեղը սիրահարվում նրան: Հազարատոտիկն էլ տեսնում է որդին և նույնպես սիրահարվում:

Հենց այդ օրը որդը խնամախոս է գտնում՝ պառավ մողեսին, և նրան ուղարկում է հազարատոտիկի ծնողների մոտ: Մողեսը այնպես է գովաբանում որդի գեղեցկությունն ու խելքը, նրա երկար մարմինը, գետնի տակի բազամահարկ ապարանքը, որ հազարատոտիկը անմիջապես համաձայնում է նրա հետ ամուսնանալ:

Հենց որ այդ մասին իմանում են մյուս որդերը, սկսում են գալարվել, հոգոց քաշել, հառաչել:

- Դա սարսափելի է,- գոչում են ոմանք:- Երևակայեցեք միայն, նրա հարսնացուն հազար ոտք ունի: Դժբախտ որդը երբեք չի կարող կոշկակարների պարտքի տակից դուրս գալ:

Ուրիշները ասում են.

- Հարսնացուն պճնամոլ է: Նա կպահանջի իր համար հինգ հարյուր զույգ սովորական կոշիկ, հինգ հարյուր զույգ տոնական և հինգ հարյուր զույգ էլ կարմիր սաֆյանեի մաշիկներ:

Իսկ հազարատոտիկի ընկերուհիները նույնպես դժգոհում են.

- Ի՞նչ է նա գտել այդ որդի մեջ: Չէ՞ որ նա ոչ մի ոտք չունի: Նա ուղղակի այլանդակ է,- ասում են մի քանիսը:

- Պատկերացրեք միայն,- շարունակում են մյուսները,- քանի օր պետք է կորցնել, որպեսզի կտրել, կարել և օսլայել մի հագուստը այդքան երկար ու անճոռնի կազմվածքի համար:

Ուրիշները սարսափած բացականչում են.

- Խեղճ հազարատոտիկ: Նա երբեք հանգիստ չի ունենա: Նա ստիպված կլինի առավոտից մինչև իրիկուն լվանալ, տոփանով

թակել և օսլայել ամուսնու հագուստը: Չէ որ որդը հողի տակ է ապրում և այնպես է կեղտոտվում, որ նրան հարկավոր է օրը մի տասն անգամ հագուստ փոխել:

Երբ հազարատոտիկը լսում էր ընկերուհիների ասեկոսեները, շատ է տխրում: Եվ մինչ փեսացուն ուրախ-ուրախ հողի տակ նոր հարկաբաժին կփորեր իր ապագա կնոջ համար, հազարատոտիկը մտածում է իր հետագա պարտականությունների մասին: Նա մտածում է երկար հագուստների մասին, որոնք պետք է կարեր իր ամուսնու համար, այն մասին, որ այդ հագուստները անընդհատ հարկավոր էր լվանալ և օսլայել, որ ինքը հավիտյան պետք է հոգ տաներ, որպեսզի տանը հաճելի տաք լիներ, մաքուր և խոնավ:

Քարի տակ պառկած՝ հազարատոտիկը օր ու գիշեր այդ մասին է մտածում: Վերջապես նա այնքան է հուսահատվում, որ որոշում է որդի հետ չամուսնանալ:

Սկզբում որդը շատ է վշտանում գեղեցիկ հազարատոտիկի մերժումը լսելով: Բայց հետո, հիշելով այն բոլորը, ինչ ասում էին իր ընկերները, մտածում է. «Իսկ որտեղի՞ց ես կարող եմ այդքան դրամ ճարել, որպեսզի հազարատոտիկին ոտնամաններ հագցնեմ»:

Եվ հաշվելով, թե որքան է հարկավոր վճարել հինգ հարյուր զույգ հասարակ կոշիկի համար, նա այնքան է հուզվում, որ նույնիսկ կուչ է գալիս: Իսկ երբ պատկերացնում է, թե ինքը որքան պետք է վճարի հինգ հարյուր զույգ կարմիր սաֆյանե մաշիկների համար, քիչ է մնում խելքը գցի:

- Դա անհնարին է, բղավում է որդը: Որտեղ պիտի պահի նա այդքան կոշկեղենը: Իսկ դեռ ինչպիսի աղմուկ կբարձրանա տանը, երբ հազարատոտիկը ման գա փայտաներբան կոշիկներով: Այդպիսի թխկոցից կարելի է խլանալ:

Խեղճ որդը իրեն արդեն տեսնում է սնանկացած, խլացած և տանջված: Խցկվելով հողի տակ, տան ամենահեռավոր սենյա-

կում, որդը տուշ է ճարում, վերցնում է վրձինը և հարսնացուին գրում իր մերժումը:

Այդ ժամանակ, երբ հազարատոտիկը որդից նամակ է ստանում, որդն էլ այդպիսի մի նամակ է ստանում հազարատոտիկից: Նրանց հարսանիքը խափանվում է, և որդը հավիտյան մնում է ամուրի, իսկ հազարատոտիկը մինչև մահ ապրում է մենակության մեջ, հին քարի տակ: Այդպես էլ չի իմանում հիմար որդը, որ հազարատոտիկը երբեք էլ ոչ մի տեսակի կոշիկ չի հագնում և բոբիկ է քայլում, իսկ ծույլ հազարատոտիկն էլ մտքով իսկ չի անցկացնում, որ որդը միշտ էլ նույն հագուստն է հագնում, և այդ հագուստը երբեք էլ չի կեղտոտվում:

Ահա թե ինչ է պատահում, երբ լսում ես ուրիշի ասեկոսեները և հավատում պարապ խոսակցություններին:

Իմ գործը չէ

Ներ գյուղում ապրում էր մի գյուղացի: Նա այնքան տարօրինակ մարդ էր, որ եթե նրան ասեիր հարևանի տունը վառվում է, նա կպատասխաներ.

- Ինձ ինչ: Ուրիշների գործերին երկինքն անգամ հոգ չի տանում: Իմ ինչ գործն է:

Մեզ մոտ նրան այսպես էլ անվանում էին՝ «Իմ գործը չէ»:

Մի անգամ Իմ գործը չէ-ն քաղաքից գնում է մի պարկ չոր բակլա: Պարկը գցում է ուսն ու բերում տուն... Եվ չի նկատում, որ տակը ծակ է: Ահա նա գնում է, իսկ բակլաները մեկը մյուսի ետևից թափվում են գետնին:

Իսկ նրա ետևից քայլելիս է լինում հարևանը, որը նույնպես շուկայից է վերադառնում: Սա տեսնում է, թե ինչպես են բակլաները պարկից թափվում, և Իմ գործը չէ-ին հարցնում է.

- Եթե ուրիշին դժբախտություն է պատահում, ինչ ես կարծում, պետք է հայտնեմ նրան, թե՞ չհայտնել:

- Ուրիշի գործը ոչ մեկիս չի վերաբերում,- փնթփնթում է Իմ գործը չէ-ն:

Հարևանը լռում է.

Մի փոքր էլ են գնում, բակլաները թափվում են, հա թափվում:

Պարկի կեսը դատարկվում է. հարևանը նորից է հարցնում.

- Դե, իսկ եթե ուրիշի դժբախտությանը կարելի է հասնել, օգնել, այդ դեպքում ինչպե՞ս վարվել:

- Ոչ մի կերպ,- պատասխանում է Իմ գործը չէ-ն: Քեզ դրանից ի՞նչ օգուտ: Երբեք մի խառնվիր ուրիշի գործին:

Հասնում են գյուղ: Այստեղ միայն Իմ գործը չէ-ն նկատում է, որ համարյա ամբողջ բակլան պարկից թափվել է: Նա շատ է բարկանում:

- Իսկ դու՝ կրիայի տղա, ինչո՞ւ ինձ ոչինչ չասացիր:

Հարևանը պատասխանում է.

- Չէ՞ որ դու՝ Իմ գործը չէ, ինքդ ինձ ասացիր, որ դա իմ գործը չէ:

Բովանդակություն

Թագավորի որդու առաջին դասերը 3
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Ա. Նազինյանի)
Ինչն է ավելի կարևոր 6
(իտալական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Ծեր պապն ու թոռը 14
(Գրիմ եղբայրներ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Հավատարիմ բազեն 17
(հնդկական հեքիաթ, թարգմ.՝ Թ. Ահարոնյան)
Մոր սերը 20
(կորեական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Եզը, որ կատարեց իր խոստումը 26
(հնդկական հեքիաթ, թարգմ.՝ Ս. Միքայելյան)
Աղքատն ու երջանկությունը 29
(արաբական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Հաճույքը 32
(չինական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Ագահը 35
(պարսկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Գ. Ասատրյան)
Երեք ոսկե աղյուս 38
(պակիստանական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Երեք ախպեր 42
(պարսկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Գ. Ասատրյան)

Մեղավոր ավանակը **44**
(ֆիլիպինյան հեքիաթ, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Ալիբեկ Կաշկաշին **46**
(եգիպտական հեքիաթ)
Խրատ թագավորներին **49**
(հնդկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Ս. Միքայելյան)
Ծերունիների իմաստնությունը **53**
(բուլղարական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)
Փղի հյուր նապաստակը **57**
(աֆրիկյան հեքիաթ, թարգմ.՝ Թ. Ահարոնյան)
Կարմրատամ Այինը **59**
(անգլիական հեքիաթ, թարգմ.՝ Թ. Ահարոնյան)
Սուլթան Մահմուդն ու Այազը **69**
(պարսկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Գ. Ասատրյան)
Ոսկի բանալին **72**
(գերմանական հեքիաթ, թարգմ.՝ Հովհ. Թումանյան)
Հազարատոտիկն ու որդը **80**
(կորեական հեքիաթ)
Իմ գործը չէ **84**
(չինական հեքիաթ)

Կազմող՝
Նազելի Կարապետյան

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

Նկարազարդումը՝
Լուիզա Գալստյանի

Համակարգչային ձևավորումը՝
Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House